Ժ. ՏԱՐԻ 2772 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 23 ԱՀԵԿԱՆ 4385 30 ԱՊՐԻԼ 1893 25 ՇԵՎՎԱԼ 1310 ՕՒՐԲԱԹ

20 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԻՆՉ ԻՆՉ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Կ. Պոլիս

درعليه‌ده غلطه‌ده آره‌ولك غزته‌سى اداره‌سنه

Direction du journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
Քաղաքական եւ Ազգային

20 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար	Տարեկան դրամով	150
»	Վեցամսեայ »	75
»	Եռամսեայ »	40
Օսմ. երկիրներ	Տարեկան Օսմ.	56
»	Վեցամսեայ	28
Ընտիր թուղթի վրայ	Տարեկան Օսմ. Ոսկի	2
Փաւստաց թղթատարի	Ֆրանք	50

Խմբագրութեան ուղղուած նամակ կամ այլ գրութիւն ետ չի տրուիր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, ԱՊՐԻԼ 30/12 ՄԱՅԻՍ 1893

ԸՆԿԵՐԱՅԻՆ ՆԻՒԹԵՐ

ԱՆԳԼԻԱՑԻՈՑ ԽԱՂԵՐՆ

Ուր որ երթան, Անգլիացիք կ'որոշուին, եթէ ոչ ուրիշ բանով, գէթ իրենց խաղերով։ Այս է համոզումն ազնուական գրագէտ երիտասարդի մը, Պ. Ճօրճ Քըրզընի, որ քանի տարիէ հետէ իբրեւ թղթակից, հեղինակ եւ զբօսաշրջիկ, կը պտըտի Պարսկաստան, Հնդկաստան, Հնդկաչինական երկիրն, Հոնք-Քոնկ, Չին եւ Ճափոն։

Մարմնամարզի գիտական ձեւերուն կարեւորութիւն չեն տար, բայց կը սիրեն, կը պաշտեն խաղն, այն գործնական, բնական մարմնամարզը։ Քանի մը Անգլիացիք մէկտեղեցա՞ն, ահա կը կազմեն Ֆութ-պօլի, Լօն-Թէնիսի, Փօլօ-Պօլի, Կոլֆի, Պէյզ-Պօլի խումբեր։ Ասոնք մէկ մէկ ձեւերն են այն գունդխաղին, զոր մեք Արեւելցիքս ու մանաւանդ Պոլսեցիքս՝ տղաքներուն եւեթ սեփականելու սխալը կը գործենք։ Անգլիացիք անխտիր կը խաղան, պզտիկ տղէն մինչեւ սպիտակահեր ծերունին, մանչ թէ աղջիկ, մանկամարդ օրիորդ թէ ամուսնացեալ տիկին։ Ամեն կաշկանդումէ զերծ այս ազատ շարժումներ գերազանցապէս կը նպաստեն Անգլիացւոց եւ Անգլօհնդաց ֆիզիքական զարգացման։ Անոր համար այր եւ կին վարդ այտեր, շիտակ կեցուածք, առողջ երեւոյթ, կորովի ընթացք ունին, այն կլիմային տակ որ այնքան տկարացուցիչ հանգամանքներ կը ներկայէ, զուրկ մեր վայելած լոյս արեւէն։

Պ. Քըրզըն կը գրէ. «Ուր կողմ կ'ուզէք նայեցէք, բաւական է որ Անգլիացիք ոտք կոխած ըլլան, հարթ գետիններ, կակուղ մուշտակնման մարգագետիններ պատրաստուած են գունդխաղի։ Ի Շանկայ, Հոնկ-Քոնկ, Սինկափուր, անգլիացի գաղթականք կազմած են գեղեցիկ Ակումբներ, զբօսարաններ ուր կրնան ծխել, թէյ եւ սուրճ խմել, գնդամուղ (պիլեարտ) խաղալ, եւ այն հաստատութեանց յարակից անպատճառ ունին գունդխաղի հարթավայր մը։ Երբ գնդակ խաղալէն յոգնին, կ'երթան անգլիական օրագիրներու եւ հանդէսներու պաշարին վրայ, որով այս ծայրագոյն-արեւելեան ընթերցարաններ նոյնքան ճոխապէս օժտեալ են որքան ի Լոնտոն Փէլ-Մէլի ո՛ եւ է զբօսարան։ Այս խաղասիրութեամբ է որ անգլիացի գաղթականք այնքան առողջ կը մնան արեւելեան այն տաք կլիմայից ներքեւ, մինչ Գերմանացին օր ըստ օրէ իւղ կը կապէ կը գիրնայ, եւ Ֆրանսացին կը թորշոմի, կորուսանելով ախորժակն եւ կեանքի հաճոյքն։ Հասարակածէն հազիւ 70 մղոն հեռի, Անգլիացին չի յոգնիր Football եւ Hockey խաղալ։ Աւելցուցէք ասոնց վրայ արշաւներն, որք ունին իրենց առանձին ակումբներն ու ընկերակցութիւններն, եւ գաղափար կ'ունենաք Անգլիացւոյն իւր որոշեալ առեւտրական, ճարտարական կամ սեղանաւորական ասպարէզէն դուրս ցուցած գործունէութեան վրայ, որով կը պահէ ու կը բարւոքէ իւր առողջութիւն, եւ հաճելի կ'ընծայէ ամենէն անհրապոյր միջավայրն անգամ ուր նետած է զինք կեանքի պայքարը։ Հոնկ-Քոնկի կամ Շանկայի «Տէրպին» (տարեկան ձիարշաւի մրցանակը) շահող Անգլիացին վաղանցիկ հաճոյքէ աւելի բան մը կ'ունենայ։ Հանդիսական օրերու մէջ անշուշտ կը պարեն։ Իրենց ընտանեկան յարկերն եւ ըստ կարելւոյն Մայր-Հայրենեաց ընտանի ոճով կը կազմակերպեն։ Երբեմն կահկարասիքն անգամ Անգլիայէն բերել կուտան ուղղակի։ Մաքրութեան, կոկիկութեան եւ վայելչութեան բնատոհմիկ ճաշակը բացորոշ կ'երեւի հանրային պարտէզներուն ու զբօսավայրերուն մէջ, ուր որ Անգլիացիք բաւական առաւելակշիռ տարր մ'են։ Եւ եթէ անգլիական ազդեցութեան ամեն նշան անհետանար վաղը, միշտ իբրեւ հրաշալիք պիտի մնար թէ ինչպէս չոր ժայռի կտորէ մը Անգլիացիք կրցած են յառաջ բերել այն եդեմական վայրն որ Հոնկ-Քոնկ կը կոչուի։»

Ասիկա Անգլիացւոց ամենէն լաւ եւ օրինակելի կողմերէն մէկն է։ Առողջ եւ առողջարար զուարճութիւններէն համ կ'առնուն, որք իրենց թէ՛ հոգին եւ թէ՛ մարմինը զերծ կը կացուցանեն տկարացուցիչ ազդեցութիւններէ, կը բարւոքեն ու կը զարգացնեն։ Ֆրանսացիք հիմակ սկսած են եռանդեամբ հետեւիլ այս անգլիական սովորութեանց, եւ ֆրանսական կառավարութիւնն ինք պաշտօնապէս կը քաջալերէ այն ընկերակցութիւններ որք ի Փարիզ եւ գաւառային գլխաւոր կեդրոններու մէջ կազմուած են՝ գնդակախաղի եւ արշաւի (Sport) զանազան ձեւերն ու տեսակներն ընդհանրացնելու համար ֆրանսացի երիտասարդութեան եւ ժողովրդեան ամեն դասերուն մէջ։

ՇԻԳԱԿՕՅԻ ՏԻԵԶԵՐԱՀԱՆԴԻՍԻՆ ՄԷՋ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ

Իւնիվէռ կը գրէ. — «Բրիտանեան բաժնին մէջ դրուած նիւթոց ցուցակն հրատարակուած ըլլալով, գաղափար մը կրցած ենք կազմել այս մասին։ Անգլիացիք բաւական լաւ բաներ ի ցոյց դրած են գեղարուեստից, ելեկտրականութեան, հանքաց, շարժիչ զօրութեան եւ փոխադրութեան ճիւղերուն եւ կանանց աշխատութեան մասին։ Բայց անգլիական ցոյցերը տկար են շատ մը մասամբք, գլխաւորապէս տարազագործութեանց մէջ։ Ցուցակէն դատելով, անգլ. բաժինն հազիւ կը համապատասխանէ 60,000 ոսկւոյ կառավարական նպաստին։ Բայց կարելի է անձամբ այցելող եւ դատողներ գտնեն թէ անգլիացի անհամար ոմանք իրենց ճիւղերուն պատիւը վեր բռնող բաներ ի ցոյց դրած ըլլան։ Ցախճապակեայ եւ կաւեղէն անօթոց արհեստագործութիւնը ճարտարութեանց շարքին մէջ լաւագոյն տեղ մը կը բռնէ։ Մեր վաճառականներէն ու գործարանատէրներէն խիստ շատեր, սակայն, Մաք Քինլիի մաքսային օրէնքէն չափէն աւելի խրտչած են, եւ Շիքակօ ապրանք ղրկել չեն ուզած։ Անգլիական կարգադիր յանձնախումբն ալ իւր ճիւղերուն միջոցաւ պէտք եղածին պէս չէ գործած ցուցադրիչներու թիւը շատցնելու։ Գեղարուեստից եւ կանանց աշխատութեան ճիւղերը բաւական են ցուցնելու թէ երբ Արուեստահանդէսի մը առթիւ մասնախումբ մը իւր գործը լրջօրէն կը նկատէ եւ ազդուապէս յառաջ կը տանի, որչափ գոհացուցիչ արդիւնք կրնայ ի հանդէս բերել։»

ԵՐԵՔ ԱՆԽՈՀԵՄՈՒԹԻՒՆՔ ԱՐԱՆՑ. — Իմաստուն ծերունի Կոմսուհին Ք. (Ֆրանսուհի) սովոր էր ըսել թէ «Երեք մարդոց երեք անխոհեմութիւններն ամենէն աւելի զարմանք կը պատճառեն ինծի։ Առաջինն այն է որ ծառերու վրայ կը մագլցին կ'ելնեն, շատ անգամ մեծ վտանգ աչքերնին առնելով պտուղը ժողվելու կամ թօթափելու համար, մինչ եթէ պարզապէս սպասեն՝ պտուղն ինքնին վար կ'իյնայ։ Երկրորդն այն է որ մենամարտ ու կռիւ կը հրատարակեն զիրար մեռցնելու համար, մինչ եթէ պարզապէս սպասեն՝ ամենքն ալ պիտի մեռնին, եւ բնական եղանակաւ, առանց այնքան յոգնութեանց եւ գռեհկութեանց։ Երրորդ անհամբերութիւնն ալ այն է որ կնիկներուն հետամուտ կ'ըլլան այնքան, մինչ եթէ պարզապէս սպասեն, կնիկներն ինքնին կուգան։ — Եւ սակայն ըսողը կին մ'էր, կոմսուհի մը։

ՀԱՅՈՑ ՎԱՆՔ. Լրագիրք Անգլիոյ պատկերահանդիսին տարեկան ցուցադրութեան առթիւ գովեստիւ կը խօսին Օր. Հիլտա Մոնթալպայի յօրինած մէկ պատկերին վրայ որ Հայոց Վանք մը կը ներկայացնէ, (ի թիւ 616 Royal Academyի պատկերահանդիսին մէջ)։

Տնտեսական խնդիր

ՕՐՈՒԱՆ ԽՆԴԻՐՔ
ՆՈՐ ՎԻՃԱԿ ՍԱԿԱՐԱՆԱՑ

Ղալաթիոյ Սակարանը վերջին օրերս շատ տկար էր, եւ թէպէտ արեւմտեան Սակարանաց մէջ գներու անկումն հետագիրք չեն բացատրեր, բայց պատճառներն ըստ բաւականին յայտնի են, եւ Արեւելքի մէջ ևս արդէն նշմարուեցան։ — Նախ եւ առաջ, սա պէտք չէ վրիպեցնենք մեր ուշադրութենէն թէ ժամանակէ մ'ի վեր գիներն արուեստակեալ միջոցներով բարձր կը բռնուէին։ Շահադէտ զօրեղ խմբակներ կային որք կարգ մը թուղթեր դէպ ի վեր կը քշէին հանապազ, այն միակ դիտումով որ նպաստաւոր առթիւ ձեռքէ հանեն շահաւորապէս։ Ցորչափ աննպաստ պարագայք վրայ չհասնէին, պատճառ չկար որ այս դրութիւն յառաջ չտարուէր։ Բայց բնական էր որ առաջին առթիւ երբ աննպաստ հանգամանքներ ազդէին Սակարանի վրայ, այնպիսի արուեստակեալ եղանակաւ բարձր բռնուած թուղթեր իյնային աւելի կամ նուազ։

Արդ, երկու շաբաթէ ի վեր Եւրոպիոյ ամեն կողմ հրատարակեալ տեղեկութիւնք կը ցուցնեն թէ չորութեան մեծ երկիւղ կայ, եւ ուրեք ուրեք երաշտութիւնն իւր աղետալի գործը կատարած է, փճացնելով բոլոր այն արմտիք որք ծմռան համար ցանուած էին։ Այն չորութեան յաջորդող սաստիկ ցուրտն, որ տեղ տեղ ձիւն ալ յառաջ բերած է, աւելի ծանրացուց վիճակն, եւ [illegible] վաճառականք, սեղանաւորք եւ պետական մարդիկ կը պատրաստուին անյաջող հունձքի մը ամեն անպատեհութեանց։

Միւս կողմէ, ի Գերմանիա, Կայսեր եւ Քաբրիվի կոմսի բանախօսութիւնք եւ յայտարարութիւնք եւ Ռայխսթակի որոշմունք տկարացուցիչ ազդեցութիւն մ'ունեցան Սակարանաց վրայ։ Մինչեւ որ ընտրութիւնք վերջանան, այսինքն՝ մինչեւ մի քանի շաբաթ, կացութեան ծանր անստուգութիւնը պիտի շարունակէ այն մասին։

Լոնտոնի հրապարակին վրայ եւս ծանր բեռ կայ, Աւստրալիոյ սնանկութիւնք, Նիւ Եորքի սնանկութիւնք, Հըլի ճարտարագործական խնդիրք, կառավարական ծրագրին ունենալիք ելքն, ևն։ Շուէտի եւ Պելժիոյ խնդիրներն եւս դեռ լուծուած չեն։ Շուէտի խնդիրը մանաւանդ կարծես նոր կը սկսի։

Նաեւ, սեղանաւորական տեսակէտով, չենք կրնար մոռնալ թէ Իտալիոյ, Սպանիոյ եւ Փորթուկալի գանձային կացութիւնը կարգադրուած չէ, եւ մէկ մէկ կրկին բեռ են հրապարակին վրայ։

Վերջապէս, Յունաստանի փոխառութեան ի դերեւ ելնելն եւ հելլենական արժեթղթերուն կրած խորտակումը Սակարանաց վրայ յոռի տպաւորութիւն ընող կարեւոր դէպքերէն մին են։ Ղալաթիոյ մէջ յոյն դրամատունք, յոյն շահագէտք ու սեղանաւորք եւ ոչ-յոյն ուրիշ տարերք ևս բաւական մեծ պաշար մ'ունին հելլենական թղթոց, եւ այս անախորժ լուրեր, եւ ընդ նոյն Պ. Թրիքուբիսի հրաժարման պարտաւորելը Ղալաթիոյ Սակարանին մէջ բնականապէս աննպաստ տպաւորութիւն բերին։ Երէկ իրիկուն կ'ըսուէր թէ Եորկիոս Թագաւոր չէ ընդուներ Պ. Թրիքուբիսի հրաժարականը։ Բայց Պ. Թրիքուբիս ալ չի կրնար հոն առնուլ, զի փոխառութիւնն իւր գանձային-քաղաքական ծրագրին հիմնական կէտն էր։ Եթէ այս փոխառութիւն վերջնապէս չյաջողի, յետինն չոր քան զառաջինն կ'ըլլայ Յունաստանի մէջ։ Վերջին պահուն ծանուցուեցաւ թէ Պ. Սօթիրօբուլօ պիտի յաջորդէ Պ. Թրիքուբիսի։

Հելլենական պարտուց վերջին կտրոնին վճարումէն յառաջ, գինը 62 էր։ Այս աննպաստ լրոց վրայ, 45 էն ալ վար ինկաւ, որ ըսել է՝ 25 առ 100 ի կորուստ մի քանի օրուան մէջ։

Օսմանեան արժեթղթեր համեմատապէս քիչ վնասուած են։

ԻԶՄԻՐԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

Անցեալ օր ծանուցինք թէ Իզմիր-Այտընի երկաթուղւոյն («Օսմանեան Երկաթուղի») անգլ. ընկերութիւնն իւր գծին երկարաձգման համար 100,000 անգլ. ոսկւոյ պարտաթուղթ հանած է 5 առ 100։

Այս գումարին եօթնպատիկն ստորագրուած ըլլալով, Ընկերութիւնը ծանոյց թէ խնդրուած թղթոց մէկ եօթներորդ մասը միայն պիտի տայ։ Ասիկա ամեն պարագայի մէջ աւելի փայլուն յաջողութիւն մ'էր քան Տէտէաղաճ-Սելանիկի ստորագրութիւնն, որ ո՛չ խոր կրկնապատիկ էր խնդրուած գումարին, այլ գրեթէ ճիշդ խնդրուած գումարը։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԵՐՄԱՆԻԱ. Ընդհանուր ուշադրութեան առարկայն է այս պահուս Գերմանիոյ [illegible] կ'արժէ յիշեցնել թէ ասկէ առաջ զինուորական ծրագրերն այսպիսի ընդդիմութեան բախած, բայց ի վերջոյ ընդունուած են։ Նախ Բրուսիոյ մէջ այսպէս եղած է, յետոյ Գերմանիոյ մէջ։ Վիլհէլմ Առաջնոյ օրով, երբ Ռօօն պատերազմական նախարար էր, ի Բրուսիա, զինուորական մեծ վերակազմութիւնք Լանտթակին մէջ (*) սաստիկ ընդդիմութեան ընդհարեցաւ։ Այն ատեն Վիլհէլմ Ա. իշխանութեան կոչեց Պիսմարք, ծայրայեղ պահպանողականն, որ խնդիրը քալեցուց հակառակ Լանտթակի տրամադրութեանց, եւ չորս տարի ետքը Սատովայի յաղթանակն իրաւունք տուաւ թագաւորին եւ իւր վարչապետին։ 1887ին Պիսմարքի առաջարկած Եօթնամեայ Զինուորական Նմանագրի ծրագիրն ևս անձանութիւն յարոյց, բայց վարչապետը լուծեց Ռայխսթակ, եւ այնպէս ուժգնապէս վարեց ընտրական պայքարն որ նոր Ռայխսթակն ընդունեց զինուորական ծրագիրը։ Քաբրիվի կոմս, այս նախընթաց պարագայներն յիշելէ զատ, կը յուսայ ընդդիմադիր կուսակցութեանց ոմանց մէջ հերձուած յառաջ բերել, եւ նպաստաւոր մեծամասնութիւն մը գտնել։

Ալզաս-Լօրէնի 15 երեսփոխաններէն 2ը զինուորական ծրագրին ի նպաստ քուէարկեցին, 7ն հակառակ գտնուեցան, 1ը ձեռնպահ մնաց եւ 5ը բացակայ էին ժողովէն։

ԻՏԱԼԻԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ. — Վիլհէլմ կայսր, մեկնելով Սպեցիայի իտալեան մեծ նաւարանէն ու զինուորական նաւահանգստէն, ըսաւ թէ այս այցելութիւն վերին աստիճան հետաքրքրած է զինք. բայց դժբախտաբար ժամանակը պակսեցաւ ամեն բան մանրամասնօրէն տեսնելու, եւ հետեւապէս, մտադիր է ի մօտոյ առանձին գալ եւ վերստին այցելել։ — Այս առթիւ նորէն կը գրուի թէ Վիլհէլմ կայսեր կրտսերագոյն քոյրն Իտալիոյ գահաժառանգին հետ պիտի նշանուի եղեր։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԼՈՅՏ շոգենաւային ընկերութիւնն հզօր մրցում մը կ'ընէ անգլիական շոգենաւային ընկերութեանց։ Այժմ գերմանական նաւարանի մը մէջ շինել կուտայ երկու մեծ շոգենաւեր, որով պիտի փոխադրէ Գերմանիոյ-Ամերիկայի թղթատարական պայուսակները։ Մին կը կրէ Իշխան Խնամակալ Լուիթփօլտ անունը, միւսն Իշխան Հայնրիխ անունը։ Մինչեւ որ ասոնք շինուին, ասպարէզը կը մնայ Քիւնարտի նոր շինած Քամբանիա շոգենաւուն, որ գերմանական Իշխան Պիսմարք (Կ. Պոլիս եկած) գեղեցիկ շոգենաւէն ա՛լ աւելի գեղեցիկ եւ ա՛լ աւելի մեծ է, եւ հրաշալիք կը գործէ Ատլանտեան Ովկիանոսին վրայ, ընդ մէջ Անգլիոյ եւ Միացեալ Նահանգաց։

ԸՆԴՈՎԵԱՑ ՀԵՌԱԳՐՈՒԹԵԱՆ ամենէն ճարտար գործիչը մեռաւ, ինչպէս համառօտիւ ծանուցինք անցեալ օր։ Այս էր Սըր Ճէյմզ Անտէրսըն, տնօրէն Արեւելեան Հեռագրութեան Ընկերութեան, [illegible] առեւտրական նաւերու նաւապետ, Հնդկաստանի, Չինաստանի եւ Ամերիկայի կողմերը շատ գնաց եկաւ։ 1851ին Քիւնարտ ընկերութեան շոգենաւերուն նաւապետ եղաւ։ Նաւապետ եղաւ նաեւ Կրէթ Իսթէրն անհագին շոգենաւուն, որ իւր առողջութեան պատճառաւ իսկ չկրցաւ կանոնաւորապէս երթեւեկել, եւ ուրիշ բանի չծառայեց բայց եթէ Ատլանտեան Ովկիանոսին տակ հեռագրոյ պարաններ զետեղելու։ Այս գործին ահա ինքզինք նուիրեց Անտէրսըն։ 1866ին զոյգ հանեց, եւ իւր աշխատութեան իրաւամբ այնքան մեծ կարեւորութիւն տրուեցաւ որ Թագուհին ասպետութեան աստիճան տուաւ նմա, Սըր տիտղոսով։ Անկէ ի վեր ո՛ր ծովուն տակ հեռագրոյ պարան հաստատել պէտք եղաւ, Անտէրսըն գլխաւոր գործիչն եղաւ, եւ իւր արտաքոյ կարգի վարչական կարողութիւնք եւ մասնագիտական հմտութիւնք զինք բարձրացուցին հեռագրութեան այս ճիւղը բանեցնող անգլ. մեծագոյն ընկերութեան տնօրէնի պաշտօնին։

ԱՂԵՏԱԼԻ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ. — Փեթերսպուրկի ռուսերէն եկեղեցական գլխաւոր թերթը կը ծանուցանէ թէ 1,000 հոգիէ բաղկացեալ ռուս ուխտաւորաց կարաւան մը Նազարէթ գացած միջոցին ցուրտէն այնքան նեղուեցաւ որ փոքր մէկ մասը միայն յաջողեցաւ սուրբ քաղաքն հասնիլ, եւ մնացեալք կա՛մ ճամբուն մեռան եւ կամ ծանրապէս հիւանդանալով՝ ետ կեցան ճամբան շարունակել։

ՍՕՍԻԷ ԶՕՐԱՎԱՐ, բազում տարիներէ հետէ Փարիզի բարձրագոյն հրամանատարն, եւ ֆրանսական բանակի ամենէն ակնածելի զօրապետներէն մին, այս օրերս խօսակցութեան առարկայն է. զի տեսրակ մը հրատարակեցաւ որ զինք գովելով կ'ըսէ թէ Պ. Քառնոյի եօթնամեայ պաշտօնին լրանալէն ետեւ կրնայ յաջորդել նմա։ Պ. Քառնոյի պաշտօնը մէկ ու կէս տարիէն կը վերջանայ։ Բայց Հանրապետականք, իբրեւ հակապուլանժեական, զինուորական նախագահի մը գաղափարին համակիր չեն ըլլար։

ՎԻՔԹՕՐԻԱ ԹԱԳՈՒՀԻՆ Մայիս 3/15 ին պիտի կատարէ իւր իսկ արձանին բացումն, որ հաստատուած է ի Լոնտոն Քէնսինկթընի պարտէզին մէջ, դէմ յանդիման Քէնսինկթընի պալատան, ուր ծնած է Ն. Վեհափառութիւն եւ ուր ընդունած է իւր գահակալութեան լուրն։ Այս արձանին յօրինման եւ հաստատման համար 3,000 ոսկի հանգանակուած էր հանրային ստորագրութեամբ։ Եւ գիտէ՞ք ո՛վ է արձանագործը. — Նոյն իսկ Թագուհւոյն դուստրը Լուիզ իշխանուհին, կին Լօռնի մարքիզին, եւ հարս Արկայլի դքսին։

(*) Բրուսիոյ Երեսփ. Ժողով։

ԹԵՐԹՕՆ «ԱՐԵՒԵԼՔ»Ի (7)

ԼՈՒԻ ԺԱՔՕԼԻՕ

ԻԺՕՐԻ ՋԱՂԱՑՔԻՆ ՈՃԻՐԸ

Ա.

ՀԱՐՑԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՒՈՐԸ

—Օ՛հ, պարոն դատաւոր, այն մարդուն որ վակոնին գորգին տակ դրուած թուղթի չորս կտորները ժողված է, որ առանձինն Իժօր եկած է, որ բանաւոր ենթադրութիւններու շարունակութեամբ մը, գտած է ոսկիէ թելն ու մուշինի կտորը, որ առաջին ակնարկով, կասկածած է վճռաբեկ ատենի նախագահին վրայ... որ ի հեճուկս ամեն հակառակ նշաններու որք կը փճացընէին առաջին այնքան թեթեւ նշանները, յամառած է նախազգալու թէ այս ամենուն տակ ոճիր մը կը ծածկուէր որ վախճանն եղած էր քամինելի պատմութեան մը, այն մարդուն...

—Լաւ ուրեմն, այն մարդուն, աւարտեցէք, պարոն Լիւս։

—Կը բաւէր...։ Ներողութիւն, պարոն դատաւոր։

—Շարունակեցէք։

—Լաւ ուրեմն, կը բաւէր որ քանի մը ամիս ծառայէր ոստիկանութեան մէջ, մեր ամենուս պետն ըլլալու համար։

Տը Մարսէյ ժպտեցաւ. ենթադրութիւնն որքան ալ տարօրինակ ըլլար, անոր պարունակած փաղաքշանքը հաճելի երեւցած էր իրեն։

—Ձեր խորհուրդին կը սպասեմ, ըսաւ ոստիկանին, բարեհաճ ձայնով մը։

—Շատ պարզ է, աւասիկ. ի՛նչ ալ գիտենք, ի՛նչ ալ պատահի, երբեք չփորձենք թէ՛ ակնարկով, թէ՛ շարժումով, մեր տպաւորութիւններն իրարու հաղորդել։

—Ձեր կարծիքէն եմ։

—Հո՛ս միայն ապահով ենք, շարունակեց Լիւս։ Այս երկրին ամեն հին տուներուն պէս, ջաղացքը շինուած է կրանիթեայ պատերով, 50 հարիւրորդամեթր թանձրութեամբ. ուրեմն կրնանք ցած ձայնով խօսակցիլ այս սենեկին մէջ, առանց ինքզինքնիս մատնելու վախի, բայց հո՛ս միայն... Ուրեմն ամեն իրիկուն, երբ պառկած կարծեն զմեզ, երբ դուռը կղպուի եւ լոյսը մարի, իմ ականջս ձերինին կը մօտեցունեմ, եւ կը հաղորդեմ ձեզ օրուան մէջ կրած տպաւորութիւններս եւ յաջորդ օրուան համար որոշած ծրագիրս։

—Համամիտ եմ, պատասխանեց Պ. տը Մարսէյ, ձեռքը բռնատեղին վրայ դնելով։

—Վայրկեան մը, պարոն դատաւոր, ըսաւ ոստիկանը, անպատճառ պէտք է որ գղեակին աւերակները պտըտցունէք զիս. կարելի է նշան մը կը գտնեմ որ ձեր աչքէն վրիպած ըլլայ։

—Ի՞նչպէս ընելու է։

—Բայց աշխարհի ամենաբնական կերպովը. կուգամ, նկարիչ եմ, ի՞նչ աւելի բնական քան այցել այս նկարչագեղ աւերակները. ընդհակառակն, ուրիշ կերպով վարուիլը կասկածներ պիտի յարուցանէ։

—Սրամիտ էք, պարոն Լիւս, բայց չափազանց զգուշութիւն ի գործ չէ՞ք դներ հանդէպ գիւղացիներու, որք անշուշտ խորամանկ են, բայց չեմ կարծեր որ այդչափ հեռուները տանին իրենց դիտողութիւնները։

—Մտիկ ըրէք, պարոն դատաւոր, եթէ յաջողիմ տապալել Պուառոնները, կը լսէ՞ք, պարոն դատաւոր, աւելի պիտի պանծամ քան եթէ մեծ մեքենայութիւն մը երեւան հանէի, կեանքիս մէջ ոստիկանական էն մեծ յաջողութիւնը պիտի ըլլայ այս։

—Ա՞յդ աստիճան։

—Այո, այս աստիճան, պարոն դատաւոր. այս մարդիկը չպիտի խօսէին տանջանքի միջոցաւ, եթէ տանջանքը տակաւին գոյութիւն ունենար... բնաւորութիւնները կը ճանչնամ... ի՛նչ ալ ըրած ըլլան՝ պիտի մեռնին առանց բան մը խոստովանելու։ Երեւակայեցէք իմ յաղթանակս եթէ յաջողէի խլել անոնցմէ ոչ թէ խոստովանութիւն մը, այլ ապացոյց մը... գացէք խնդրեցէք հայր Պուառոնէն որ մեզ ընկերանայ գղեակ այցելելու համար։

—Յօժարակամ, կը հրաւիրեմ ձեզ որ գիտէք հայր Պիէռը, ծեր պահապան մը, որ ինքն ալ շատ բան գիտնալու է։

Երկու մարդերն այն ատեն իրենց կռնակը կապեցին քառակուսի տուփն որ կը պարունակէր նկարչութեան գործիները. ներկ, պատկերակալ, յօղաւոր աթոռ, արեւարգել, եւ տան գետնայարկն իջան։ Ջաղացքը կ'արձակէր իր միօրինակ թիքթաքը. հայր Պուառոն եւ իր որդին, ջաղացքին փոշիովը ծածկուած, արդէն նստած էին սեղանի մը առջեւ ուր Մառիան դրած էր կաղամբի ապուր մը։

—Գիշերն ի՞նչպէս անցուցիք, պարոններ, ըսաւ ջաղացպանը զանոնք տեսնելուն։

—Աղէկ, հայր Պուառոն, պատասխանեց տը Մարսէյ

—Լաւ ուրեմն, ըսաւ ծերունին սքանչելի բնականութեամբ, անհանգիստ եղած ըլլալու էք սա խոշոր աղջկան աղաղակներէն, եթէ ոչ գէշ չի քնացուիր ջաղացքին մէջ։

Այս բառերն արտասանելով, Պուառոն բարեկամական փոքր ապտակ մը տուաւ աղախինին այտին, որ հաճոյքէ կարմրցաւ։

—Խեղճ Մառիաննա (*), շարունակեց ժպտելով, կ'երազէր թէ սեւ ցորենի պարկ մը կ'անցունէր երկանաքարին տակ...։ Մեր լեռներուն կաղամբի ապուրը ձեզ փորձելու յատկութիւնն ունի՞, պարոններ։ Կուզէ՞ք մեզի պէս ընել։

— Յօժարակամ, պատասխանեց տը Մարսէյ, ձեր ախորժակը կանուխ բացուեր է, հայր Պուառոն։

—Հը՛մ, հը՛մ, պարոններ, պատճառն այն է որ մենք հոս փարիզեան տենդոտ կեանքը չունինք մաքուր օդ կը ծծենք եւ հանդարտ սիրտ ունինք։

Այս վերջին բառերուն, ոստիկանը արագ ակնարկ մը նետեց ծերունիին վրայ։

Հայր Պուառոն մեղմիւ կը ժպտէր, մարդու մը պէս որուն ամբողջ կեանքը անցած է դաշտերու կեանքին անձուկ շրջանակին մէջ։

—Երբեք չպիտի յաջողիմ, մտածեց Լիւս, [illegible] աւելի աղէկ կը խաղայ։

Անկեղծ ախորժակով մը ուտելով հանդերձ համեղ հացի ապուր չերտի մը վրայ դրած աղածի փոքր կտոր մը, տը Մարսէյ իմացուց իր հիւրամեծարներուն թէ իր ընկերը կը փափաքի այցելել գղեակին աւերակները։

—Ձեզ պիտի ընկերանամ, պատասխանեց հայր Պուառոն անմիջապէս, վասն զի նոր պահապանը չի ճանչնար ձեզի։

—Ի՞նչ, նոր պահապան մը կայ գղեակը։

—Այո, պատասխանեց ջաղացպանը, հայր Պիէռը, որ ութսուն տարեկանի մօտ էր, ձեր մեկնումին երկրորդ օրը մեռաւ, յանկարծ մարեցաւ լամպարի մը պէս որուն իւղն հատած է, խեղճ սիրելի մարդը։

—Եւ ժամանակ գտնուա՞ծ է տեղն ուրիշ մը դնելու։

—Օ՛հ, անմիջապէս. կալուածատէրներուն վերատեսուչը, որ Փարիզ կը բնակի, գրած է Սէն-Ռանպէրի նոտարին, որ իր վարձակալներէ մին դրկած է, այդ պաշտօնն երկար ատենէ ի վեր խոստացած ըլլալով անոր։

—Այս մահը տարօրինակ է, մտածեց Լիւս, չափազանց ճիշդ ժամանակին կը հասնի. ծերունիին թուլութեանը վրայ վստահութիւն չեն ըրած... բայց եթէ իմ ենթադրութիւնս ճիշդ է, ըսաւ ոստիկանը շարունակելով իր ներքին մենախօսութիւնը, արդէն միջոցներ ձեռք առած են, կը զգան թէ իրենց վրայ կասկած կայ՝ Պ. տը Մարսէյի առաջին ուղեւորութենէն իսկ... եւ կը կասկածին մեր վրայ... տեսնենք։

—Պատրաստ եմ, պարոններ, ըսաւ յանկարծ հայր Պուառոն, որ խոշոր գաւաթ մը գինիով ողոգած էր ապուրին վերջին դգալը։

Դէպ ի գղեակ ճամբայ ելան։

Երբ հասան քայքայուած այն դուռն ուսկից ներքին ճեմելիքները կ'երթուէր, կարծեցեալ նկարիչներն ու Պուառոն ընդունուեցան նոր պահապանին կողմէ, որ հաւանեցաւ առաջնորդել անոնց։

Լիւս անոր երեսը նայելուն պէս քիչ մնաց որ նուաղէր, բայց բոլոր ուժն ամփոփեց իր պաղարիւնի կորովին շնորհիւ, դէմքը ամենեւին չյուզուեցաւ, եւ ամենէն ճարտար դիմագէտը դժուարութիւն պիտի կրէր անոր վրայ յուզման ամենէն խուսափուկ նշանը գտնելու համար։

Դղեակն ու պարտէզն այցելելու ամբողջ միջոցին, Լիւս կարծես բոլորովին մոռցաւ իր այցելութեան շարժառիթները, խուզարկու նայուածք մը չնետեց աւերակներուն վրայ, չուզեց մտնել ներքին սենեակներն ու շատացաւ գովելով գիւղանկարին ընդհանուր տեսարանը։

—Եթէ այս կերպով պիտի դիտէ՛, մտածեց տը Մարսէյ։

Բայց իրիկուան սպասեց իր տպաւորութիւններն հաղորդելու իր ստորակարգեալին։

Դղեակէն ելնելու պահուն Լիւս մէկ ֆրանքի համեստ գումարը դրաւ պահապանին ձեռքը բռնելով։

(Շարունակելի)

(*) Սեվէն լեռներուն մէջ ա — կաւելցնեն անուններուն վերջը ի նշան մտերմութեան։

Ի ՆԻՒ ԵՈՐՔ, Չիքակոյի Արուեստահանդէսին բացման ուրախալի դէպքին հետ միեւնոյն ժամանակ, անախորժ կացութիւն մը երեւան ելաւ, ոսկւոյ տագնապին բերմամբ կարգ մը սեղանաւորաց սնանկութեամբը։ Պ. Ջիոլիթթիի վարչութիւնն ևս տակաւին չէ յաջողած այս խնդիրը կարգադրել։ Աւստրալիոյ և Ամերիկայի այս տագնապք կ՚երեւի թէ Եւրոպիոյ մէջ ևս արձագանգ ունենալ կոչուած են։

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ Ի ՀՈՒՆԳԱՐԻԱ. — Մաճառական Աւագաց ժողովը կամ Ծերակոյտն 56ի դէմ 81 քուէով ընդունեց Կէզա Սաբարի կոմսին առաջարկն, որով կը պարսաւէ Տքթ. Վէքերլէի նախարարութեան բերած ծրագիրը քաղաքային ամուսնութեան վրայ. (քաղաքային արձանագրութիւն ամուսնութեանց, զոր անցեալ օր բացատրեցինք)։

ՍԵՒ ԾՈՎՈՒ ՆԱՒԱՏՈՐՄԸ. — Փեթերպուրկէ հեռագիր մը կը ծանուցանէ թէ առաջիկայ շաբթուն մէջ Ցարն ի Սեւաստոփոլ պիտի անցունէ Սեւ Ծովու նաւատորմը։

ՏԱՐՄՇՏԱՏԻ մեծ-դուքսը նոյն դքսութեան խորհրդարանին նստաշրջանը փակելով, ցաւ յայտնեց զինուորական օրէնքին Ռայխսթակէն մերժման համար, և փափաքանք [illegible] նպաստաւոր քուէ պիտի տան յառաջիկային։

ԱԶԳԱՅԻՆ
ԼՈՒՐԵՐ

Ամեն. Ս. Պատրիարք Հայրն երէկ Բ. Դուռն երթալով տեսակցեցաւ Բարձր. Մեծ-Եպարքոսին հետ։

Կեսարիոյ առաջնորդ. Գեր. Տրդատ Ծ. վարդապետ Պալեան՝ ընկերակցութեամբ Պատրիարքարանի գործակատար Փրէնկեան Աբրահամ էֆէնտիի, երէկ Ատլիյէի պաշտօնատունը գնաց և տեսակցեցաւ Դատական Նախարար Վսեմ. Րիզա փաշայի հետ։

Ուսումնական Խորհրդոյ շաբաթական նիստը տեղի ունեցաւ չորեքշաբթի օր ի խորհրդարան Ղալաթիոյ, ատենապետութեամբ Պէրպէրեան Ռեթէոս էֆէնտիի։

Խորհուրդը զբաղեցաւ այս անգամ Մայրեան Դպրոցի կամ Մանկավարժէի ծրագրով, որուն վրայ համաձայնեցաւ։ Յաջորդ նստին պիտի քննէ Տարրական Նախակրթարանի ծրագիրը։

Մատթէոսեան Աբրահամ էֆէնտիի կողմանէ յօրինեալ և ի վաւերացումն ներկայացեալ Կրօնական ուսուցման Օժանդակ անուն դասատետրին նախապատրաստութիւնն յանձնեց իր անդամակիցներէն Սրփեան Միհրան էֆէնտիի։

Ցետ կանոնական գործողութեանց՝ որոշեց Նախակրթարանի վարժուհւոյ վկայական տալ Օր. Նազենի Մանուէլեանի։

Գեր. Տ. Մատթէոս արքեպիսկոպոս Իզմիրլեան հանդերձեալ է Ս. Պատարագ մատուցանել, յառաջիկայ կիրակէ առաւօտ, ի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ Բերայի, ի հանգիստ հոգւոյ հանգուցեալ Գրիգոր էֆէնտի Ներսէսեանի։

Յառաջիկայ կիրակէ Գեր. Պատրիարքական Փոխանորդ Հայրն հրաւիրուած է Ս. Պատարագ մատուցանել Գում-Գաբուի դրսի Ս. Յարութիւն եկեղեցին, և քարոզութեամբ մխիթարել ժողովուրդը։

Բարեկիշատակ Տիկին Էպրու Դ. Երամեան ի կենդանութեան անդ բերում այլ և այլ պատեհ առթիւ Թաղիս Ս. Եկեղեցւոյ պայծառութեան և այլ կարեւոր պիտոյից հոգացման համար բարեպաշտական նուէրք մատուցած լինելով, Թաղական Խորհուրդս յանուն և ի դիմաց Թաղեցւոց երախտագիտական հարկ մը մատուցած ըլլալու նպատակաւ հրաւիրած է զԳեր. Տ. Գրիգորիս եպիսկոպոս Ալէքթճեան մատուցանելու Ս. Պատարագ և կատարելու հոգեհանգստեան պաշտօն յառաջիկայ կիրակէ (մայիս 2) ի Ս. Եկեղեցւոջ Թաղիս ի հանգիստ հոգւոյ նոյն առաքինազարդ և բարեկիշատակ Տիկնոջ։

Ի դիմաց Թաղ. Խորհրդոյ
Պէշիկթաշի
Ատենադպիր   Վ. Ատենապետ
Ա. ՕՀԱՆԵԱՆ   Գ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ
29 Ապրիլ 1893
Ի Ս. Հիփսիմեանց Եկեղեցի
Պէշիկթաշի

Մեղուի շաբաթաթերթի վաղուան թիւը կը պարունակէ հետեւեալները.

Առաջնորդող յօդուած. Միլիոնները կորուստ, Ա. Ա. Սուրէնեան.—Ուսուցիչ եւ աշակերտ, Հովիւ.—Ցետագայ առթիւ, Ա. Ա. Սուրէնեան.—Կանոնական Կոնդակ, Յովհաննէս Պատրիարք.—Լրագրութեան առաջադրութիւն, Ե. Տէմիրճիպաշեան.—Արիկեան Բառարան, Օհան Խնամեան.—Վկայութիւն Գրիգոր Զոհրապի (Մասիս).—Վերաքննութիւն, Ս. Դաւթեան.—Տեսիլ (Բանաստեղծութիւն) Յովսէփ Սեւեան փաշա.—Խօսակցութիւն Բժշկին, Վարդան Յ. Թ. Հինդլեան.—Տաղանդ լեզու. Ս. Դ.—Տանտիկիններուն, Յ. Թ. Հինդլեան.—Մեր հորիզոնէն դուրս, Դ. Պիւլպիւլեան.—Նորթուան ազգային եւ ներքին լուրեր.—Մրցանակաւոր հանելուկ։

Մեղուի տարեկան բաժանորդագինն է 50 ղրուշ։ Դիմել առ. Տնօրէն-հրատարակիչ Յ. Գ. Փափազեան, Կ. Պոլիս, պահչէ-Գաբու, Շէյխ-իւլ-Իսլամ խան։

Համար 40 փարա

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

1 Մայիս 1893

Մասիսի վաղուան թիւը կը պարունակէ Փրանսայի արդի ամենէն հռչակաւոր վիպասաններէն ԱԼՖՈՆՍ ՏՕՏԷԻ պատկերը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՊԱՏՐՈՒԱԿ [Խմբագրական]	ՀՐԱՆԴ
ՄԵՐ ՊԱՏԿԵՐԸ. Ալֆօնս Տօտէ	ՏԻԳՐԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ
ՊԱՏՐԱՆՔ (Քերթուած)	ՄԿՐՏԻՉ ԱՃԷՄԵԱՆ
ԳԻՆՈՎԻՆ ՎԱՐՁՔԸ (Ժողովրդային պատմութիւն)	ԵՐՈՒԱՆԴ
ՄԱՆՐԻԿ ՈՍԿԵՐԸ (Քերթուած)	ՎԱՀԱՆ ՄԱԼԷԶԵԱՆ
ՄԵՐ ՀԱՒԱՏՔԸ (Մանկութեան յիշատակներ)	ՀՐԱՆԴ
ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ	

Ներքին լուրեր

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.—Միթիլլիի կառավարիչ անուանեցաւ Հրֆզի փաշա, կառավարիչ [illegible] Թէվֆիք փաշա, կառավարիչ Միթիլլիի։

Պետական Խորհրդոյ անդամ անուանեցաւ Այտընի կուսակալին տրամադրութեան տակ պաշտօնավարող Արիֆ Հիքմէթ պէյ, որուն Սանիյէ Միւթեմայիզի աստիճան տրուեցաւ։

Ականակուռ Օսմանիյէ պատուանշան տրուեցաւ Զինուորական Փոնտի Յանձնաժողովոյ անդամներէն Ֆերիդ Նեճիպ փաշայի։

Առաջին կարգի Մէճիտիյէ՝ Սպարապետի Դրան ռազմական-զինուորաց ճիւղին պաշտօնեաներէն Միրլիվա Պլինդ փաշային և Հանրային Պարտուց վարչական ժողովին նախագահ Պ. Պէձաժէի։

Լիաքաթի արծաթ չքանշան՝ Հանրային Պարտուց վարչութեան հաշուեքննիչ ճիւղին տնօրէն Պ. Մէաիի։

Ի ԿԱՅՍ. ՊԱԼԱՏ. — Բարձր. Սպարապետն և Ներքին գործոց ու Ելմտական Վսեմ. Նախարարներն երէկ կայս. պալատ երթալով ստացան Վեհ. Սուլթանի հրամանները։

Ի Բ. ԴՈՒՌՆ. —Աւստրիական ու Հոլանտական դեսպանք երէկ Բ. Դուռն երթալով յաջորդաբար տեսակցեցան Բարձր. Մեծ-Եպարքոսին, Արտաքին գործոց Վսեմ. Նախարարին և Վսեմ. Խորհրդականին հետ։

—Պելճիական նախկին դեսպան Պ. Հուրիքս, որ յառաջիկայ երկուշաբթի օր կը մեկնի մայրաքաղաքէս, երէկ Բ. Դուռն երթալով այցելութիւն տուաւ Բարձր. Մեծ-Եպարքոսին, Արտաքին գործոց Վսեմ. Նախարարին ու Վսեմ. Խորհրդականին և իւր հրաժեշտի ողջոյնը մատոյց։

— Պերլինի ճապոնական դեսպանն, որ մայրաքաղաքս կը գտնուի, երէկ Բ. Դուռն երթալով այցելութիւն տուաւ արտաքին գործոց Վսեմ. Նախարարին։

ԿԱՅՍ. ՇՆՈՐՀ. — Խըրքայի Շէրիֆի օրն Վեհ. Սուլթանի անցած ճամբաներուն վրայ բարեւի կեցող իսլամ, քրիստոնեայ և հրեայ վարժարանաց տնօրէններուն, ուսուցիչներուն, հոգաբարձուներուն և աշակերտաց բաշխուելու համար Ն. Կ. Վեհափառութիւն հազար հինգհարիւր ոսկի շնորհած է։ Այս դրամ կայս. անձնական Գանձուն Նախարարութեան կողմէ ղրկուած է Կրթական Նախարարութեան։ Ինչպէս յայտնի է, Մէարիֆի պաշտօնեայներէ կազմեալ յանձնաժողովն սկսած է բաշխել կայսերական սոյն պարգեւը։

ՄԱԼԻՅԷԻ մէջ երէկ յանձնաժողով մը ի նիստ գումարուեցաւ ընդ. նախագահութեամբ Վսեմ. Նախարարին և ելմտական խնդրոյ վրայ խորհրդակցութիւններ կատարեց։

ՃՕՀՕՐԻ Վեհապետը մայրաքաղաքէս մեկնելէն առաջ երէկ, հինգշաբթի, միջօրէէն առաջ կայս. Պալատ գնաց և Վեհ. Սուլթանին հետ տեսակցելու պատիւն ունեցաւ։ Ճօհօրի վեհապետն յետոյ ներկայ գտնուեցաւ Մարգարէի Ծննդեան գրքին ընթերցման, յաւարտ որոյ իւր հրաժեշտի ողջոյնը մատուցանելով կայս. պալատէն մեկնեցաւ և երեկոյեան եւրոպական կառախումբով Վիէննա ուղեւորեցաւ։

Ճօհօրի վեհապետը մեկնելէ առաջ կայս. Թիկնապահ Ահմէտ Ալի փաշաի ապարանքը գնաց և հոն ճաշեց։

Վեհ. Սուլթանին կողմէ արարողապետ Մունիր փաշա և կայս. թիկնապահ Ահմէտ Ալի փաշա Սիրքեճիի կայարանն երթալով ողջերթ մաղթեցին։ Անգղիական դեսպանն ու դեսպանատան պաշտօնեայք ևս կայարան երթալով ողջերթ մաղթեցին։

ՀՆՏԱԽՏ.—Առողջապահական վարչութեան ուղղուած լուրերուն համեմատ, հնտախտ ծագեր է Թեհրանէն 60 քիլոմեթր անդին, Ազիզաբատ անուն տեղը։

ՀՈՒՆԳԱՐԻՈՅ ջրհանկիր զօրաց գունդերուն կողմէ կարգեալ պատգամաւորութիւն մը անցեալ տարի մայրաքաղաքս եկած էր շնորհաւորելու համար ջրհանկիր զօրաց գունդին հրամանատար Զէքէնէի փաշան՝ Հունգարիոյ նոյն գունդերը մանելուն քառասնամեայ յոբելեանը։

Այդ պատգամաւորութիւն՝ Վեհ. Սուլթանի կողմէ իրեն նկատմամբ եղած սիրալիր ընդունելութեանց համար ի նշան երախտագիտութեան գեղակերտ և արեւելեան ճաշակով պատրաստուած ոսկեզօծ ալպոմ ղրկած է մայրաքաղաքս, յատուկ պատգամաւորի մը ձեռամբ։ Այդ ալպոմ, որ կը պարունակէ՝ Հունգարացի պատուիրակութեան լուսանկարները, նախընթաց օր մատուցուեցաւ Վեհ. Սուլթանին որ բարեհաճեցաւ ընդունիլ զայն։

ՅՈՒՆԱՑ Պատրիարքարանի Մետրապոլիտներու ժողովն իւր երէկի նստին մէջ Տրապիզոնի մետրապոլիտ կարգեց պատրիարքական փոխանորդ Գեր. Տ. Քոնսթանթինոսն, փոխանակ Տ. Ղավրիլի, որ պաշտօնանկ եղած էր։ Տ. Քոնսթանթինոս յառաջիկայ կիրակէ օր [illegible] պիտի ընդունի Ֆէնէրի Մայր եկեղեցւոյն մէջ։

Կ. ՊՈԼՍՈՅ Արուեստահանդէսին համար ճարտարապետ Պ. Վալօրիի և ուրիշ ձեռնհաս անձանց կողմէ պատրաստուած յատակագծերը Վեհ. Սուլթանին մատուցուելով արժանացած են կայսերական հաւանութեան։ Բարձր. Մեծ-Եպարքոսը ծանուցած է զայս Արուեստահանդէսի յանձնաժողովին։

ՄԻՏԻԼԼԻԻ ճահիճներու ցամաքեցուցման և ձկնաւազաններու հաստատման համար Իսմայիլ Հազզը պէյի շնորհուած արտօնութիւնը գործադրելու նպատակաւ անանուն ընկերութիւն մը կազմուած է հոն։ Ընկերութեան դրամագլուխն է 50,000 օսմ. ոսկոյ բաժնեթուղթ, իւրաքանչիւրը 1 օսմ. ոսկինոց։ Վարչական խորհրդոյ անդամներն են Տիմիթրաքի էֆ. Եէնի-տէնեա՝ նախագահ, Իսմայիլ Հազզը պէյ՝ փոխ-նախագահ, Տիմիթրաքի էֆէնտի Կուրճի ընդհ. տնօրէն, Պ. Բարամանօ, Պ. Թօմաս Կուրճի և Պ. Ա. Արամանիլի, անդամք։ Ընկերութեան կեդրոնատեղին պիտի հաստատուի ի Միտիլլի։

Կ. ՊՈԼՍՈՅ ՊՈՒԼԿԱՐՆԵՐԸ.—Կ. Պոլիս բնակող պուլկարներն իրենց մէջ հանգանակութիւն մը բացած էին, Ֆերտինանտ իշխանին նուիրելու համար, անոր ամուսնութեանն առթիւ, սուրճի սպաս մը արծաթեայ և երկու սափոր՝ նոյնպէս արծաթեայ, որոց միոյն վրայ պուլկարերէն ձօն մը քանդակուած է։ Այս ընծայ, որ երեք օր առաջ Սոֆիա ղրկուած է, իշխանին և իշխանուհւոյն պիտի մատուցուի, երբ հոն ժամանեն։

ԵԷՆԻՃԱՄԻԻ նորակառոյց Նամակատունը շինող Մահմուտ Միւրէզա պէյ և Միտիլլիի Քոսթի Գալֆա հեռագրական եւ թղթատարական վերատեսչութեան դիմելով յայտարարած են թէ պայմանագրութենէն դուրս 200,000 ղրշ. ծախք մը ըրած են, ինչ ինչ աւելորդ շինութեանց և զարդարանաց համար։ Վերատեսչութիւնը պատասխանած է թէ նախ եւ առաջ շէնքը պէտք է քննուի Քաղաքապետութեան կողմէ, և անկէ յետոյ իրենց նկատողութեան առնու իրենց աղերսագիրը։

ԴՐԱՄԱՆԵՆԳ.—Ոստիկանութիւնը ձերբակալած է Անտոն անուն դրամանենգ մը, որուն վրայէն Մէճիտիյէի 28 հատ կեղծ դրամներ և տունէն ալ զայնս պատրաստելու յատուկ գործիներ գտնուած են։

ՊՐՈՒՍԱՅԻ առեւտրական ատենի պակասեալ անդամոց տեղ ընտրուած են Գայսէրիլի Ալի էֆէնտի, Եանի Բաքքալիտի էֆէնտի, Մրնտրգեան Յովհաննէս էֆէնտի և Տէմճեան Աթանաս էֆէնտի։ Առեւտրական նոյն ատենին դեր-նախագահ ընտրուած է Ալի էֆէնտի, առաջին խորհրդական՝ Հաֆըզ Նուրի էֆէնտի, երկրորդ խորհրդական՝ Խօպլոսեան Յովհաննէս էֆէնտի և գանձապետ՝ Պօտուրեան Յովհաննէս էֆէնտի։

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ վարժարանաց ընդհանուր վերատեսչութիւնը երկու քննիչ յանձնախումբեր կազմած է այս տարի քաղաքային բժշկական երկրորդական վարժարանի բժշկական ու դեղագործական ճիւղերուն մէջ ընդունուելիք աշակերտաց մուտք քննութիւնները կատարելու համար։

ՀԱՆՐՕԳՈՒՏ շինութեանց նախարարութիւնն անցեալ տարի հնարիչի 63 արտօնագրեր տուած է, Ստացողներու 19ը օսմանցի են և 42ը՝ օտարական։

ԲԵՐԱՅԻ պատժական ատեանը նախընթաց օր դատեց Մարգար և Մուրատ անուն երկու մարդիկ։ Ասոնք իրարու հետ կռուի բռնուած ըլլալով՝ մին միւսին ականջը բրցուցած էր ակռաներովը և միւսն ալ իւր հակառակորդը վիրաւորած էր հատու գործիքով մը։ Դատարանը բժշկական տեղեկագրի մը պէտքն զգալով, դատն ուրիշ օրուան յետաձգեց։

ՊԷՆԿԱԶԻԻ նախկին կուսակալ Ֆերիք Մուսա Քեազիմ փաշա, որ ժամանակէ մը ի վեր հիւանդ էր, նախընթաց օր մեռաւ։

ՆԱՒԱՅԻՆ ԱՐԿԱԾ.—Զրոյց կը շրջի թէ Սեւ Ծովու մէջ երկու նաւերու միջեւ բաղխում մը տեղի ունեցեր և նաւերէ մին բոլորովին ընկղմեր է։ Ծայտնի չէ թէ այդ նաւեր ո՛ր ընկերութեան կը պատկանին և թէ բաղխումն ի՛նչպէս պատահած է։

ԳՐԱՏՈՒՆ.—Բ. Դրան պարտէզին մէջ կառուցանելի գրատան համար 240 քառակուսի մեթր տեղ մը որոշուած է։ Ճարտարապետ՝ Միտիլլեցի Քոսթի՝ երէկ հիմերուն տեղն որոշեց և այսօր պեղումները պիտի սկսին։

ՁՄԵՌ.—Բաղէշէն կը գրեն թէ անցեալ մարտ ամսուն նահանգին մէջ սաստիկ ձմեռ ընելով առատ ձիւն տեղացեր և նահանգին այլեւայլ կողմերու մէջ մարդոց կորուստ ալ պատահեր է։ Նոյնպէս Վանայ նահանգին մէջ երեք մարդեր ձիւնի կոյտի մը ներքեւ սառեր են։

ՆԻԿՈՄԻԴԻՈՅ շրջակայ մէկ քանի գիւղերուն մէջ երեւան եկած հարսանուկն ու կարմրախտն անհետացեր է շնորհիւ ձեռք առնուած առողջապահական միջոցներու։

ՄԱՀՍՈՒՍԷԻ վարչութեան կողմէ կարգեալ պաշտօնեայք այս շաբթու պիտի ձեռնարկեն ընկղմեալ Լօֆճէ շոգենաւն հանելու։

ՀՐԴԵՀ.—Նախընթաց օր հրդեհ ծագեցաւ ի Ֆէնէր, Ցունաց Պատրիարքին պատկանող տան մը մէջ։ Կրակը, որ լամպարի մը շրջուելէն առաջ եկած էր, մարեցաւ, և սենեակի մը տախտակամածն ու կահ կարասին միայն այրեցան։

ԼՈՒՑԿԻԻ ԳՈՐԾԱՐԱՆ.—Ինչպէս երէկ ծանուցինք, լուցկիի գործարանին շինութիւնը փութով առաջ կը տարուի։ Քանի մը օր առաջ, աւելի քան 200 թոնօ շինուածանիւթ, մեծ մասամբ երկաթ, Սիրքէճիէն Զէյթինպուրնու ղրկուեր է յատուկ կառախումբով։ Գործարանին աւարտելուն պէս, պիտի խնդրուի արեւելեան երկաթուղեաց ընկերութենէն որ աքցան մը եւ գիծ մը շինէ մինչեւ գործարանին առջեւ։

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ռուսական հիւպատոսը նախընթաց օր մայրաքաղաքս ժամանեց։

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ և թղթատարական վերատեսչութիւնը կը ծանուցանէ թէ Բաղէշի նահանգին Մալազկերտի նամակատան մէջ թղթատարական ամէն տեսակ գործողութիւնք պիտի կատարուին։ Մալազկերտ կը գտնուի Վանայ և Կարնոյ թղթատարական ճամբուն վրայ։

ՄԱԼԱԹԻՈՅ մէջ ապրիլ 27ի գիշերը երկու անգամ երկրաշարժի ցնցմունք զգացուեր են, սակայն ոեւէ վնաս չէ պատահեր։

ԶՄԻՒՌՆԻԱՅԷՆ կը հեռագրեն թէ չորեքշաբթի առաւօտ, միջօրէին, և երէկ առաւօտ երկրաշարժի թեթեւ ցնցմունք զգացուեր են։

ՏԻԱՐՊԷՔԻՐԻ մէջ Իտարէի ժողովոյ եւ դատարանաց անդամներու ընտրութիւն կատարուելով, Իտարէի ժողովին անդամ ընտրուած են՝ Ապտիւլքատէր փաշա, Գազազեան Յովսէփ էֆէնտի, Հաճի Սէյֆուլլահ էֆէնտի և Մինասեան Յովհաննէս էֆէնտի։ Վերաքննիչ ատենի Հուգուգի ճիւղին համար՝ Սուպհի էֆէնտի, Հինտիքզադէ Նէճիպ էֆէնտի, Հաճի Հասիպ էֆէնտի և Խանտանեան Կարապետ էֆէնտի։ Վերաքննիչ ատենի պատժական ճիւղին համար՝ Շէյխ Փաշազադէ Մուսթաֆա պէյ, Ջինի էֆէնտի, Բիրինճիզադէ Արիֆ էֆէնտի, Պօյաճեան Յովսէփ էֆէնտի։ Նախնական դատարանին համար՝ Հաճի Իպրահիմ էֆէնտի և Չըրաքեան Ստեփան էֆէնտի։

ՈՉԽԱՐՔ.— Մայրաքաղաքիս վաճառականներէն Թէվֆիգ Գուստի էֆէնտիի հաշւոյն Սուրիական Տրիպոլիսոյ նաւահանգիստէն 4000 ոչխարներ պիտի բերուին մայրաքաղաքս։

ՈՃԻՐՔ ԵՒ ԱՐԿԱԾՔ.—Սկիւտարի Նուհ Գույուսը թաղին մէջ առջի օրը Ապտուլլահ անուն չորս տարեկան տղայ մը ջրհորի մը մէջ իյնալով խեղդուեցաւ։

—Գարագաչ անուն գնչու մը իմանալով որ իւր կինն անհաւատարմութիւն մը գործած է, նախընթաց օր վիրաւորեց զայն և փոքր տղուն վրայ ալ կրակարանը նետելով, խեղճ տղուն մարմնոյն այլ և այլ մասերն այրեցան։ Նոյն պահուն Ֆաթմա անուն ուրիշ կին մ՚ալ վախէն մեռաւ։ Գնչուն ձերբակալուեցաւ և վիրաւորեալք հիւանդանոց փոխադրուեցան։

—Եամանտի անուն այն Իսկէնեաճէն, որ Ցակոբ անուն մարդու մը կողմէ անցեալ օր վիրաւորուած էր, իւր առած վէրքէն երէկ մեռաւ կեդրոնական բանտի հիւանդանոցին մէջ։

—Երէկ առաւօտ, Լանկայի մօտ տան մը վերի յարկէն մուխ մը կ՚ելնէր քարիւղի լծու հոտով։ Այդ սենեակին մէջ կը բնակէր Սոֆիա անուն յոյն կին մը։ Անմիջապէս ոստիկանք և դրացիք նոյն տունը փութալով սենեակը մտան, ուր Սոֆիաի այրած դիակը գտան։ Քարիւղի լամպարը շրջելով անկողնոյն վրայ ինկած և խեղճ կնոջ հագուստները բռնկած էին։ Ոստիկանութիւնը քննութեանց ձեռնարկեց։

ՀԱՃՈՒԵՑԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ
ՕՅՐԻ ՏԻԿԻՆ ՖԼԱՄԱՆԻ ՎԱՃԱՌԱՏԱՆ
ԲԱՐՁՐ ՆՈՐԱՁԵՒՈՒԹԵԱՆՑ
303, Բէրա, Մեծ Փողոց—[illegible]
[illegible]

Վաճառման երկրորդ և վերջին շրջանը պիտի սկսի երկուշաբթի, 5 մայիս, գիներուն վրայ նոր զեղչով մը։
Վաճառումը կանխիկ է եւ մէկ գին։
Բերա 12 մայիս 93   579   1—3

ՀԵՌԱԳԻՐ
ԱՅՍ ՕՐՈՒԱՆ

ԼՈՆՏՈՆ, 11 Մայիս. — Անգլիոյ Պանքային տնօրէն խորհուրդն, որ անցեալ շաբթու 100ին 3ի բարձրացուցած էր իւր զեղչի սակն, այսօր ալ 3 ½ի հանեց, նկատելով որ ոսկւոյ մեծ խնդրանք կայ, և մէկ շաբթուան մէջ իւր մետաղադրամէն 704,000 ոսկի պակսած է և պանքնոտներու պահեստէն ալ 932,000 ոսկի։ Իսկ Թղթապանակի մէջ ունեցած փոխանակագրաց վրայ 435,000 ֆրի յաւելում եղած է, որով իւր պահեստք այնպէս կը համեմատին իւր յանձնառութեանց ինչպէս 39.37 առ 100

ՊՈՒՔՐԷՇ.—Գաւառներէն եկած լուրեր աւելի ծանր կը նկարագրեն ողողումներու պատճառած աւերումները։ Շատ մը գետեր յորդած են։ Գիւղացիք շատ վնասուած են։ Մարդոց կորուստ ալ պատահած են։ Կամուրջներ և երկաթուղւոյ ձողեր խլուած տարուած են։ Պուքրէշի մէջ ալ երկու թաղեր ողողեցան, ուր էին սպանդանոցն և բուսաբանական պարտէզը։ Մարդոց վնաս չպատահելու համար միջոցներ ձեռք առնուեցան։ Պուքրէշ-Եաշի եւ Պուքրէշ-Սէվէրինի գիծերն երէկ սկսան բանիլ, բայց ընդհատեալ կէտերուն վրայ փոխանցումով։

ԱԹԷՆՔ.—Թագաւորին և Պ. Թրիքուբիսի նախարարութեան միջեւ անհամաձայնութիւն չէ ծագած։ Նախարարական տագնապը դէպքերու բերմունք է լոկ։ Պ. Սիթիրոբուլօ երկարօրէն խորհրդակցեցաւ թագաւորին հետ, և կ՚ըսուի թէ արտաքոյ Խորհրդարանի վարչութիւն մը պիտի կազմէ։

ՀԱՄԲՈՒՐԿ.—Հոս հնտախտի նոր դէպք մը ծագած ըլլալուն զրոյցը կը հերքուի։

ԼՈՆՏՈՆ.—Երեսփ. ժողովը 224ի դէմ 295 քուէով մերժեց Պ. Ռըսէլի հակառաջարկն, որ կառավարական ծրագրոյն մէջէն երկու ժողովներու հաստատման մասը բառնալ կ՚ուզէր։ Երկու ժողովներու դրութիւնը գովուեցաւ, իբրեւ յաջող արդիւնք տուած դրութիւն մը անգլ. գաղթականութեանց մէջ։

—Թագուհին կատարեց «Կայսերական Կաճառին» բացումն, որ գաղթականութեանց հետ Անգլիոյ յարաբերութիւնները զարգացնել կոչուած է։ (Տե՛ս երեկի Արեւելքին մէջ։) Ժողովուրդը խանդավառ ընդունելութիւն ըրաւ Ն. Վեհափառութեան։ Ներկայ էին արքայական գերդաստանի անդամք, դեսպանք, նախարարք և ականաւոր ներկայացուցիչք անգլ. ընկերութեան,

Սակարան

ԴԱԼԱԹԻԱ, 30 Ապրիլ

ԸՆԹԱՑԻԿ ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐՔ

3 ամիս Լոնտրայի վրայ	[illegible]
3 » Փարիզի	22 87 ½

ՕՍՄԱՆԵԱՆ [illegible]

Երէկ երեկոյ փակ. Միաց. Դ. Սերի	23 32 ½
Բերայի մէջ	— —
Առաւօտուն բացուելոյ ..	23 30
Կէս օրին	23 25
Քանտիլլաթը Օսմանեան երէկ երեկոյ ...	— —
» » ժամ 5ին ...	— —

ԸՆԹԱՑԻԿ ԱՐԺԷԹՂԹՈՑ

Փոխառ. Թիւն ...... Սերի	56
» ...... »	34
» ...... »	24

ԲԱԺՆԵԹՈՒՂԹՔ

Սօսիէթէ Ժէնէրալ	Անգլ. Լր.	5 20
Քրէտի Ժէնէրալ	» »	7 38
Պանք տը Բօնս.	» »	4 33
Օսմ. [illegible]	» »	4 32
Րէժի	Օսմ. Ոսկի	16 03
Թրամուէյ.	» »	585
Օսմ. Ապահովագր. Ընկ.	»	500
Ռումէլիի Երկաթուղի	ֆր.	87 ½
Բաժնեթուղթ Լաւրիոնի ...		58

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

ԼՈՆՏՈՆ, 11 Մայիս

Անգլ. քոնսօլիտէ	98 56
Օսմ. » Սերի Դ.	21 62
» » » Ա.	54 75
» » » Բ.	33
» » » Գ.	22 37
Օսմ. փոխառութիւն 1871	98 75
Փոխառութիւն 1877 (Տէֆանս Լօն)	94 75
Պանք Օթօման	13 43
Այտընի Երկաթուղի	16 50
Դասապայի Երկաթուղի	13 50
Եգիպտական միացեալ (իւնիֆիէ)	98 12
» դաշնակ. (բրիվիլէժիէ) 1890 ..	— —
Տօմէնիալ (փոխառ. Ռօթչիլտ)	105 50
Հելլենական ...	58
Փոխանակութիւն Փարիզի վրայ	25 500

ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ

ԳՈՄԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ

Այսօրուան աւանդական յօդուածիս նիւթն է Վանի Ջոր գաւառի Գոմ գիւղին մէջ գտնուող «Սքանչելագործ-Աւետարանը», Աւետարան մը որ կ՚ուգայ ոչ այնչափ հեռի ժամանակներէ, այլ գրեթէ 80 90 տարիներէ ի վեր է որ «գոմի սքանչելագործ աւետարան» անունն առած է, և գեղջուկներու ջերմ դրուատմանց արժանի կ՚ըլլայ, որոնք աւանդաբար կ՚անցունեն սերունդէ սերունդ։

Կ՚աւանդուի որ այդ Աւետարանը անծանօթ ժամանակներէ ի վեր Մուշի Ս. Կարապետ վանքի աւետարանն է եղեր, կաղերու, կողքերու, կոյրերու, հաշմանդամներու գերագոյն բժիշկը, թանկագին քարերով և արծաթի խաչերով ծածկուած։ Մի օր ցած, ստոր գողին մէկը վանքի եկեղեցին կը սպրդի, կը գողնայ այդ Աւետարանը և կը փախչի… կը փախչի մէկ-երկու օր, ուր որ կը տանէին զինք իւր ոտները։ Գիշեր մը, Գոմ գիւղի դիմաց, դաշտին մէջ, մարդուկը կը զգայ որ ոտները կը կարկամին, կը դանդաղէ, կը կենայ, և ահա 20-30ի չափ լուսազգեստ և ձիաւոր նիզակաւորներ զինք պաշարելով նիզակները սրտին կ՚ուղղեն. մարդը սոսկումէն կը նետէ Ս. Մատեանը զոր հոգւով մարմնով կուրծքին վրայ կը սեղմէր, կը նետէ քովը խոտերու մէջ, և… մարդուն ա՛լ ինչ ըլլալը մեզ յայտնի չէ։

Կ՚անցնին օրեր։ Մի օր Գոմցի մարդ մը, անունն ալ Արիճօյի Պետրոս, Աւետարանի լքման վայրէն ոչ այնչափ հեռու իւր արտը կը հերկէր։ Ցանկարծ իւր ուշադրութիւն կը գրաւէ քչքչոց մը. կը նայի և քովը, փուշերու թուփի մը մէջ, բան մը կը նշմարէ որ անդադար լոյսերէն վեր վեր կը ցատկոտէ և անկից ալ փուշերը կը խշխշան. Նախ կը սարսափի, կը փորձէ փախչիլ, բայց ոտներն առաջ չեն երթար. սոսկում… եւ կը դառնայ, վստահ ըլլալով որ նապաստակ մը կամ աղուէս մըն է այդ աղմուկը պատճառողը, կը մօտենայ ձեռքը թուփին մէջ և կը ձերբակալէ այդ չարաճճի… կենդանին. բայց ինչ տեսնէ ձեռքին մէջ. Գիրք մը… Աւելորդ է ըսել որ սոսկումը կը կրկնապատկի և այդ անհանդարտ մատեանը բռնելով շունչը գիւղը կ՚առնէ և կ՚սկսի պոռալ որ հրաշք տեսած է։ Գիւղացիք գլխուն կը կուտուին, ան ամէն բան կը պատմէ. միահամուռ տէր հայրին կը դիմեն, որ խնդիրը մանրամասնօրէն մտիկ ընելէ և աւետարանն ալ քննելէ վերջ՝ կ՚առնէ զայն և հարկ եղած յարգանքներով եկեղեցւոյ ամենէն պատուաւոր տեղը կը դնէ։ Ահա այս կերպով այդ Աւետարանը Գոմ գիւղը կուգայ և այդ օրուընէ սկսեալ Գոմի սքանչելագործ Աւետարան» է։ Թէ ի՛նչո՞ւ սքանչելագործ՝ դիւրաւ կը հասկցուի. ո՞ր աւետարանն, ո՞ր նուիրական թուղթի կամ լաթի կտորը, ո՞ր հնադարեան սրբանուէր ժայռերն ու քարերը, ո՞ր սրբոց շուք տուած ծառերը, ո՞ր սրբոց անուամբ յորջորջեալ խաչաքարերը, ո՞ր սրբոց պապակն անցուցած աղբիւրները չ՚ունին բժշկելու, սրբելու, մաքրելու յատկութիւններ… ժողովրդեան գաւառական զարդարանքներէն որո՞նք անմասն մնացած են… այդ տեսակ մատուռներ (ուրիշ յարմարագոյն բառ չեմ գիտեր) ընդհանրապէս ամէն մէկը՝ մէկ ցաւի, մէկ հիւանդութեան բժիշկ-մասնագէտներ կ՚ըլլան, այնինչ գիրքը ջերմոտները կը բժշկէ, այնինչ ծառը բորոտներ, միւս աղբիւրը կաղեր, ուրիշ մը կոյրեր եւն. և այլն։

Սքանչելագործ աւետարանի գործածման եղանակն ալ իրեն յատուկ աւանդական սովորութեանց վրայ հիմնուած է։ Կանոնէ շեղիլ աններելի է։ Անկարելի է որ այդ Աւետարանը ժամանակէ դուրս մէկու մը գլխուն վրայ բարձրացուի, կամ թէ միւս հասարակ աւետարաններու պէս ուզած ատեն բանան ու կարդան, ո՛չ չ՚ըլլար, դա թանկագին ու պատուական վարշամակներու մէջ ծրարուած, պահուած տարին մինչեւ գլուխ կը հանգչի, իրեն մօտեցող չըլլայ, մինչեւ իւր որոշեալ օրը որ հրապարակօրէն կը հանեն դուրս։ Տեսնելու է նոյն օրուան բազմութիւնը. շրջակայներէն անթիւներ կը վազեն կ՚ուգան սքանչելագործ աւետարանի շնորհն առնելու, որովհետեւ տարին մի անգամ է։ Այդ օրը հրապարակային «պահպանեցի» մը կ՚ըսուի այդ աւետարանով՝ ժողովրդեան վրայ, կը կարդացուի, անդաստան կ՚ըլլայ եւն. յետոյ կը թոյլատրուի որ այդ ահագին բազմութիւնը հեզ, խոնարհ ոչխարներու պէս մէկիկ մէկիկ անցունէ առջեւէն, և իւր շրթունքները ջերմ համբոյրով վրան քսէ։ Ցետոյ նորէն կ՚անյայտանայ Աւետարանը, նաեւ կրնայ ըլլալ որ իւր յատուկ օրէն դուրս, տարապայման կերպով ալ հանուի, ան ալ երբ հասարակութեան մէջ կոտորիչ ախտ կամ մարախ կամ ասոր պէս պատուհասներ տեղի ունենան։ Այդ առթիւ ալ հրապարակային հսկումներ ու մատաղներ տեղի կունենան։

Սքանչելագործ աւետարանի յատկացեալ օրն է մեծ Զատկէն մէկ շաբաթ յետոյ. սովորոյն մնացած օրերը իւր ծածկոցին մէջը պլլուած քաղաքի Ս. Նշան եկեղեցին (*) մէջ կ՚անցնէ, որ կը բերեն իւր օրը լմնալէն յետոյ մինչ յաջորդ տարին՝ իւր օրէն մէկ քանի օր առաջ նորէն տանելու համար։

Աւետարանի փոխադրութիւնն ալ ունի իւր աւանդական սովորութիւններ. մարդ մը որ նոյն օրը ծոմ պիտի ըլլայ՝ կը հեծնէ ձին, ուրար մը կը կապէ թեւին, կղերական դասը պէտք եղած յարգանքներով կը բերէ աւետարանը, ուրարին մէջը կ՚անցունէ. մարդը զայն սրտին վրայ կը սեղմէ (անպատճառ այսպէս պիտի ըլլայ) և պէտք եղած տեղը կը տանի։ Աւետարանակիր ու-

---

(*) Վանի առաջնորդանիստ եկեղեցին է։

զեւորը բոլոր այդ ճամբորդութեան միջոցին պարտի անընդհատ ինքնիրեն աղօթել, ու այլ և այլ մանրամասնութիւններ։

Վերջերս, արկածով մը, կրակ առաւ ուքանչելագործը և գրեթէ կէսը մոխիր դարձաւ։ Այս առթիւ շնորհաւորելի է Վանեցի ուսուցիչ Պ. Գուռուզեանի ջանքերը որ յաջողեցաւ նորէն պէտք եղած թուղթերը կարել, փակցունել, գրերը գրել և այլն, որով գեղջուկ հաւատարմութեան սիրտը բոլորովին տխուր չը մնաց իր սիրելի Աւետարանի սոյն արկածին վրայ։

Ապրիլ 28 ՀՄԱՅԵԱԿ Ց. ՆԱՐԼԵԱՆ

ՆԱՄԱԿ ԼՈՆՏՈՆԷ

ԼՈՆՏՈՆԻ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Աշխարհի այս ոստանին ուսման կեդրոններու վրայ գաղափար մը ունենալ ինքնին կրնայ կարեւոր եւ օգտակար ըլլալ։ Կը խորհիմ սակայն թէ աս տեղի դպրոցներու և ուսանողներու վրայ գրելով թերեւս ուղղակի կամ անուղղակի չնչին ծառայութիւն մը մատուցած ըլլամ Արեւելքի ընթերցողներէ անոնց, որք օրին մէկը Լոնտոնի ուսանողական կեանքին մէջ մտնելու յոյս և մտադրութիւն ունին։ Նպատակս պիտի ըլլայ ընդհանուր գաղափար մը միայն տալ ընթերցողին. թերեւս սակայն տեղ տեղ մտնեմ մանրամասնութեանց, Լոնտոնի մէջ ուսանիլ փափաքողներու օգտին համար։

Աստիճանաբար վարէն վեր ելլելու համար սկսինք Թաղային վարժարաններէ։ Թաղային վարժարանք և կամ Նախակրթարանք արդարեւ կարեւոր տեղ մը կը բռնեն դպրոցական աշխարհին մէջ։ Լոնտոնի փողոցներուն ծանօթ մէկը դիտած ըլլալու է կարմիր աղիւսով շինուած ահագին շէնքերը. կրնաք ապահովապէս գրաւ դնել թէ Թաղային վարժարաններու շէնքերն են անոնք. իսկ եթէ պատահմամբ կէս օրին անցնիք այդ կարգի շէնքերու մէկուն առջեւէն, ան ատեն բնաւ դժուարութիւն չպիտի ունենաք կռահելու համար շէնքին պաշտօնը։ Խաղացող տղայոց հանած աղմուկը դպրոցէ զատ ուրիշ բանի մը հետ չէք կրնար համաձայնեցնել։ Այս Նախակրթարաններու մեծ շէնքերու քով սովորաբար կը տեսնէք ընդարձակ գետիններ, որ յատկապէս պատրաստուած են մարմնամարզական խաղերու համար։ Թաղային վարժարաններն յաճախող աշակերտներու թիւն մեծ է ամեն տեղ. փոքրիկ մանչեր և աղջիկներ կերթան հոն, և անկէ կ'առնեն առաջին քայլը ուսմանց ասպարէզին մէջ։ Ներկայ յօդուածս գրելու ձեռնարկելէ առաջ գացի յատկապէս աչքէ անցընել այդ շէնքերէ մի քանին. ամեն բան կանոնաւոր և գոհացուցիչ վիճակի մը մէջ կը տեսնուէր. ամեն բան «մանկավարժական սկզբունք»ի համաձայն էր պիտի ըսէի, եթէ այդ բացատրութեան իմաստը հասկնալու չափ բաղդաւոր ըլլայի։

Թաղային վարժարանք (կամ Նախակրթարանք) կառավարական հսկողութեան տակ են, ունին ուսմանց ընդհանուր ծրագիր։ Այս դրութիւն բնականաբար ունի անհամեմատ առաւելութիւններ և յանձնարարելի կէտեր։ Ընթացքը բաժնուած է վեց կարգերու, և բոլոր Նախակրթարանք կը յարին միեւնոյն ընթացքին. այնպէս որ Ա. թաղի Նախակրթարանէն ելլող և Բ. թաղի Նախակրթարանը գացող տղեկը գրքերու եւայլնի փոփոխման պէտք չունի։ Բաւական է որ ձգած Նախակրթարանին իրեն ձեռքը տուած թուղթը ցուցնէ մտնելիք նախակրթարանին և անմիջապէս, առանց քննութեան և ուրիշ ձեւակերպութեանց կը շարունակէ ընթացքը, հիմակուան գտնուած թաղին դպրոցին մէջ։ Բանէ հասկցող ո և է մէկը կրնայ գիտնալ դէմ ելլող տղուն ուսումնական վիճակը. բաւ է որ գիտնայ թէ որ կարգին մէջ է։ Այս տեսակ միօրինակ դասընթացք մը մեծ դիւրութիւններ ունի անտարակոյս. և կերեւի թէ Պոլսոյ մէջ այսպէս համոզուողներ կան, որ կը ջանան Թաղային վարժարանաց մէջ ունենալ տեսակ մը նմանութիւն և համաձայնութիւն։ Կարժէ փորձել. արդիւնքը լաւ եղած է այս մայրաքաղաքին մէջ։

Նախակրթարաններէ ետքը կուգան բարձրագոյն կրթարանք։ Հոս կը յաճախեն անոնք որ կուզեն առնել ամեն քաղաքացիի տրուածէն բարձրագոյն կրթութիւն մը։ Կան թաղային բարձրագոյն կրթարանք, մասնաւորապէս աղքատ դասուն համար։ Աւելի բարեկեցիկ դասն սովորաբար կընտրէ երթալ մասնաւորաց վարժարաններն։ Եւ այդ մասնաւոր վարժարաններու թիւը խիստ մեծ է. կան մասնաւոր վարժարաններ գործաւոր դասի զաւակաց համար, միջին դասի պատկանողներու համար, հարուստ տղայոց համար, կրօնաւորներու զաւակաց համար, բժիշկներու տղայոց համար, դեռատի ուսանողներու համար, չափահասներու համար, կոյրերու համար, համրերու համար։ Ես հոս վերջակէտ կը դնեմ, իսկ ընթերցողը թող շարունակէ այդ ցանկը ուզածին չափ և տակաւին թերեւս դուրս ձգուած ըլլայ երկար շարք մը։

Բարձրագոյն վարժարանի ընթացքը աւարտելէ վերջ ուսանողը կը մտնէ Գոլլէճ. և եթէ ներէք պիտի ըսեմ թէ առաւել կամ նուազ կը նմանի Պարտիզակի բարձրագոյն վարժարանի և Ռոպերթ Գոլլէճի միջեւ գտնուած յարաբերութեան։ Բարձրագոյն վարժարանին վկայականը կ'ընդունուի Գոլլէճէն և սովորաբար առանց մուտքի քննութեան ուսանողը կը հետեւի Գոլլէճի ընթացքին։ Այս դրութիւնն ալ նորէն մէկ քանի անհաճոյ ժամեր կը հանէ ուսանողին կեանքէն. քանզի ինչ ալ ըսէք, քննութեանց ժամերը սովորական ուսանողին ամենէն սիրելի ժամերը չեն կրնար համարիլ։ Գոլլէճներն կ'աւանդեն ուսման և գիտութեան այլ և այլ ճիւղեր։

Լոնտոնի մէջ ինծի ծանօթ երկու գըլխաւոր Գոլլէճներ կան, ուր կ'աւանդուի գրեթէ ամեն մասնաճիւղ. Քինկս և Եունիվըրսիթի Գոլլէճներն են անոնք. առաջնոյն մէջ ատեն ատեն աշակերտած են հայ ուսանողներ ևս. և աս միջոցիս իսկ վերոյիշեալ երկու նշանաւոր Գոլլէճներու մէջ կ'ուսանին երկու հայ ուսանողներ։ Այս երկու գոլլէճներն ճիշդ համալսարանական դրութիւն ունին, բայց չունին կառավարութեան արտօնութիւնն իբրեւ համալսարան։ Անգլիական օրէնքին մէջ տրամադրութիւնն է այդ։ Այդ գոլլէճներու մէջ կ'ուսանին Աստուածաբանութիւն, բժշկութիւն, արհեստ, օրէնք, երկրաչափութիւն և գիտութեան բոլոր կարեւոր ճիւղերն։ Քինկս Գոլլէճը քաղաքին մէջ ունեցած կեդրոնական դիրքովը մեծ տեղ կը բռնէ Լոնտոնի կրթական գործին մէջ։ Երեկոյեան դասեր կ'աւանդուին հոն. եւ ասոնք յոյժ ժողովրդական դարձած են հիմա. ամբողջ օրը գործով պարապող երիտասարդներ իրիկունը կ'երթան ուսանիլ։ Եւ հոս չեմ կրնար անցնիլ առանց ըսելու թէ աշխարհի ամենէն բազմամբոխ քաղաքը չունի «Կիրակնօրեայ վարժարան»։

Վերոյիշեալ երկու նշանաւոր Գոլլէճներ գրեթէ բոլորովին նման են իրարու. գիտեմ սակայն թէ Եունիվըրսիթի գոլլէճ իր ընկեր գոլլէճը կը գերազանցէ բժշկական ճիւղին մէջ։ Նոյն ատեն անտարակոյս Քինկս գոլլէճն ալ ուրիշ առաւելութիւններ ունի միւսին վրայ։ Բայց ինչ որ կ'ուզեմ հասկցնել ընթերցողին, աս է թէ ուսման ո և է ճիւղի մը հետեւելու համար կրնայ դիմել այդ վարժարաններն։

Գոլլէճներու մասին խօսքս չեմ կրնար փակել առանց յիշելու մասնաւոր ճիւղերու սահմանուածներն։ Օրինակի համար կան մեծ թուով Աստուածաբանական գոլլէճներ։ Ամեն յարանուանութիւն ունի իրեն յատուկ դպրոցները, ուր մտնելու համար պահանջուած պայմաններէն մին է լոկ յարանուանական։

Լոնտոնի գոլլէճներու ահագին թուոյն մէջ կարեւոր տեղ մը կը բռնեն բժշկական վարժարանները։ Ասոնց մասին որչափ ալ երկար գրեմ չեմ ձանձրանար, բայց ընթերցողը չձանձրացնելու համար կարճ կը կապեմ։

Լոնտոնի բոլոր նշանաւոր հիւանդանոցները ունին իրենց յատուկ գոլլէճներ (*)։ Այս տեղի բժշկական ամենակարճ ընթացքը հինգ տարի է։ Այդ ընթացքի վրայ ձեւուած է բոլոր գոլլէճներու ծրագիրը, երկրորդական տարբերութիւններով հարկաւ։ Գոլլէճին մէջ ուսանողը կը սորվի տեսականը և ապա կ'անցնի հիւանդանոց, հոն գործնականը սորվելու համար։ Գոլլէճէն հիւանդանոց անցնելու համար անհրաժեշտ է անցընել պաշտօնական քննութիւններն։ Ամեն ընթացք բնականաբար ունի իրեն մասնաւորութիւններն և դժուարութիւնները. բժշկականն ամենէն նշանաւորն է թերեւս այդ մասին։

Եւ քանի որ Գոլլէճներու վրայ կը խօսինք, յիշենք բժշկական և վիրաբուժական ամենանշանաւոր երկու հաստատութիւններն՝ «Վիրաբուժից Արքունի Գոլլէճ, Անգլիոյ» և «Բժշկաց Արքունի Գոլլէճ, Լոնտոնի»։ Այս երկու հաստատութիւնք պաշտօնապէս ճանչցուած են և իրենց անդամակցաց մէջ կը գտնուին աշխարհի նշանաւոր բժիշկներն և վիրաբոյժներն։

Թէեւ չեմ կարծեր որ մեր «փափկասուն»ներու մէջէ բժիշկ ըլլալ երազողներ գտնուին, բայց տակաւին յիշեմ անցողակի թէ օրիորդաց համար ալ յատուկ բժշկական դպրոց և հիւանդանոց կան Լոնտոնի մէջ. բժշկական ուսանողներու ընդհանուր ժողովներէ մէկուն մէջ անգամ մը հանդիպեցայ ինծի վիճակակից ուսանողուհիներու։ Մանկաբարձութեան ուսանողուհիներու թիւն արդէն բաւական ստուար է. և գիտեմ հայ օրիորդ մը որ անցեալ տարի առաւ մանկաբարձութեան վկայականը։

Եւ վերջապէս քանի մը խօսք ալ Լոնտոնի Համալսարանին վրայ։ Նախ առաջ կարեւոր է գիտնալ թէ ուսման ուրիշ կեդրոն-քաղաքներու պէս համալսարան մը գոյութիւն չունի հոս։ Նոյն ատեն սակայն լսած էք թերեւս «Լոնտոնի համալսարանը» բացատրութիւնը։ Կայ ընդհանուր նմանութիւն մը, բայց միանգամայն մեծ տարբերութիւն մը Լոնտոնի Համալսարանին և ուրիշ համալսարաններու միջեւ. Բացատրենք։

«Լոնտոնի Համալսարան» բառերը ուրիշ բան մը չէ բայց եթէ քննիչ մարմին մը, որ իրեն մէջ ունի Ճօն Լըպպոքի նման գիտնականներ։ Այդ համալսարանը՝ որպէս և Բրիտանական ո և է համալսարան՝ վաւերացեալ է խորհրդարանի բարձրագոյն հրամանովը։ Ունի իրեն յատուկ փառաւոր և ընտիր շէնք մը, որ կը գործածուի քննութեանց համար՝ գլխաւորաբար (գէթ ուսանողին տեսակէտովը) և գիտական կարեւոր ժողովներու համար՝ պարբերաբար։ Համալսարանը իրեն յատուկ դասընթացք և դասատուներ չունի։ Ուսմանց և գիտութեան աստիճաններ տալու համար ունի քննիչներ և քննութիւններ։ Արդէն իսկ կը նշմարէք ուրեմն թէ բառին սովորական առմամբը ուսանողներ չունի Լոնտոնի Համալսարանը, այլ միայն աստիճանաւորներ և ընթացաւարտներ — եթէ հակառակն չէք սեպեր գործածած բառերս։ Տարւոյն մէջ որոշեալ ատեններ Համալսարանին շուրջը կը տեսնես ուսանողներ, որք սակայն հոն գացած են քննուելու համար և ոչ թէ ուսանելու։ Ուրիշ տեղերէ իրենց ստացած կրթութեան արժէքը Համալսարանին քննիչներուն դատաստանին ենթարկել գացած են։ Այս Համալսարանին առջեւ սովորաբար կը տեսնես մտահոգ ուսանողներ որք շէնքին դուռէն ներս մտած ատեննին գալիք քննութեանց վրայ գուշակութիւններ և դուրս ելած ատեննին ալ «անցայ»ի «չանցայ»ի հաւանականութիւնները կը կըռուեն իրենց մտքին մէջ։ Ուսանողին աւանդական ծիծաղկոտ և զուարթ դէմքը լուրջ և մտախոհ երեւոյթ մը կ'առնէ աս շէնքին մօտերը։

Լոնտոնի Համալսարանին և վերեւ յիշուած արքունի գոլլէճներու քննութեանց և աստիճաններու մասին չեմ ուզեր շատ երկար խօսիլ. մի գուցէ սխալ մեկնութիւն տրուի խօսքերուս։

Լոնտոնի համալսարանին փառքն շատ լսած պիտի ըլլաք սակայն երբ ըսեմ թէ աշխարհի ամենէն բարձր համալսարաններէն մին է։ Կան շատեր որք իրենց անուան ետին կը կցեն աստիճաններ, ուր երբեմն կրնաք գտնել այբուբենին բոլոր գրերն, առանց գիտնալու թէ ուսկից կամ ինչպէս ձեռք ձգած են զանոնք։ Լոնտոնէ աստիճան մը առնելն ինչ նշանակելը գիտնալու համար հարցուցէք փորձառուներուն։ Լոնտոնի Համալսարանէն աստիճան առնողն անպատճառ կը յիշէ այդ իր անուան ծայրը։ Օրինակի համար առնենք «Պսակաւոր Արհեստից» աստիճանը. Լոնտոնի «Պսակաւոր»ը «B. A. (London)» կ'աւելցնէ իր անունին ծայրը. մինչ միեւնոյն աստիճանին ամերիկեան տեսակէն ունեցողը «B. A.»ով կը գոհանայ, այդ ուսկից առած ըլլալը յիշել աւելորդ կը սեպէ։ Բացատրութիւնները կը յարգենք։

Լոնտոնի Համալսարանէն և Բրիտանական ուրիշ համալսարաններէ աստիճան առնելու մէջ կայ մէկ կէտ մ'ալ, որ թերեւս ակներեւ է արդէն ըսածներէս։ Ուրիշ համալսարաններէ աստիճան առնելու համար տարի մը կամ աւելի հոն բնակիլ պայման է, մինչ անշուշտ այդ նշանակութիւնը չունի Լոնտոնի համալսարանին համար։ Ասիկա քննութեամբ տրուած աստիճաններու համար է միայն։

Ամիսներէ ի վեր ուսումնական բարձր շրջանակաց մէջ յուզուող խնդիր մ'է Լոնտոնի մէջ նոր համալսարան մը կազմելու առաջարկը։ Այս առաջարկ բնականաբար կը քաջալերուի Քինկս և Եունիվըրսիթի գոլլէճներէ և բոլոր հիւանդանոցներէ։ Առաջարկին պաշտպանք կ'ըսեն թէ ամօթ է որ աշխարհի ամենէն մեծ քաղաքը չունենայ ուսուցանող համալսարան մը։ Նոր համալսարանին անունը Գրեշըմ դրուեցաւ ատենին. յետոյ փոխուեցաւ. և ամիսներէ հետէ թուղթի վրայ կը մնայ ամբողջ առաջարկը և ծրագիրը, որովհետեւ հակառակողներն բաւական ստուարաթիւ են։

Գալ անգամուան համար միտք ունիմ ընտրել «Լոնտոնի ուսանողները» խորագիրը։ Ան ատեն յուսամ յիշել ասկէ դուրս ձգուած կէտերն, եւ ի մասնաւորի պատկերել Լոնտոնի ուսանողին կեանքը։

ԱՐՄԷՆ ԳՆՈՒՆԻ

Լոնտոն, ապրիլ 22

(*) Բժշկական վարժարաններու և հիւանդանոցաց մասին տարիներ առաջ գրած եմ աս սիւնակաց մէջ. բայց ո՞վ կը յիշէ կարդացածը. ուստի և կրկնութենէն չեմ քաշուիր։ Ա. Գ.

ԳԶՐՈՑԸ

(ՆՈՐԱՎԷՊ)

Ա.

Շատ սիրուն և շատ քօքէթ փոքր կաղմն էր ան հին գզրոցը, Լուի ԺԵ.ի ոճով, համակ երփնագրուագ, իր վարդագոյն և սպիտակ խճանկարովը ժպտելով իբրեւ նոյնքան խնծալից շուրթեր, իր ոսկեզօծ, փայլուն փոսիկներով, պայրէ կզպանքներով։ Մեծ մօրմէս մնացած էր, որ ինքն ալ իր պապէն էր ժառանգած զայն։ Չեմ պնդեր թէ Մարլիի մէկ առանձնասենեկէն խուսափած չէ ան…

Լաւ ուրեմն, երբեք գզրոց մը այնքան անողորմաբար չնախատուեցաւ, չանարգուեցաւ, չանիծուեցաւ որքան այս սիրելի փոքր կաղն, երբ առտու մը, արթննալով ի Պիրէօն, —այո, ի Պիրէօն (Յունաստան), — անոր վրայ մտածեցի։

Ինչո՞ւ, պիտի ըսէք ինծի, ինչո՞ւ մազերուս մէջ խրեցի տենդոտ ձեռք մը. ինչո՞ւ գոչեցի. «Թշուառակա՛ն»։ Առանց աղէկ մը որոշելու թէ այս վերադիրը ինծի կուղղուէր թէ գզրոցին… ինչո՞ւ… Է՜հ, արդարեւ իմ տեղս եթէ աւելի մեծահոգ մէկը ըլլար, գանկին վրայ մազ չէր ձգեր կը փետտէր…

Դատեցէ՛ք։

Բաւական երջանիկ եղայ —ժամանակին— սիրուած ըլլալով կիներու ամենէն պաշտելիէն։ Չպիտի նկարագրեմ ձեզ զայն, նոյն իսկ իր մազերուն գոյնը։ Շատացէք գիտնալով թէ ամբողջ երկու տարի «Պաշտելի հրեշտակ», «կին ամեն երազանքներու» կոչեցի զայն, —այլ թէ երկրորդ տարւոյն վերջը թոյլ տուի բարեկամներէս մէկուն ըսել ինծի, անոր վրայ խօսած ատենը.

—Ի՜նչ, այդ աստիճան անմի՞տ էիր։

Սիրուհիս ետ զրկեց նամակներս, ճամբայ ելնելով դէպի… Մինչդեռ իսկ չանցուցի ետ զրկելու իրենները… Եւ ամենքն ալ դրի — այս է սարսափելի պարագան — հին գզրոցին մէկ պահարանին մէջ…

Հին գզրոցն իմ սենեակս է, սենեակս կը գտնուի մօրս դղեակին մէջ, մօրս դըղեակը ասկից ութն հարիւր մղոն հեռու է, Բրովանսի մէջտեղը, այսինքն թէ, դիւանագիտական պաշտօնի մը համար հապճեպով մեկնած ատենս բոլորովին մոռցայ փճացունել այս սիրուն ապացոյցներն յարաբերութեան մը որ սիրուն եղած է, —որքան որ տեւեց…

Երբ ուղեղիս խորշերուն մէջ, անծանօթ անկիւնէ մը այս յեղակարծ դիտողութիւնը ելաւ, վեր ցատքեցի զարմանքէս, —և ճիշդ բառն ըսենք, —ամօթէս։

Իմ չարաճճիութիւնս կրնար առ յաւէտ վտանգել կին մը որ բնաւ իրաւունք տուած չէր ինծի անգիտութեամբ այսպէս կնամեծար մարդու մը առաջին պարտքն, այսինքն գաղտնապահութիւնը։ Ա՛հ, դիւցազնական ընթացք ունեցայ. նաւահանգիստ վազեցի, նստեցայ Մարսիլիա ուղեւորող առաջին շոգենաւն, և չուզելով խնդրիս ապարդիւն գաղտ բանից մը մտիկ ընել, հապշտապ խոյացայ դէպի Ֆրանսա։

Մտածեցէք անգամ մը, այս իմ ըրածս կրնար տակնուվրայ ընել ամբողջ կեանքը կնոջ մը որ ուրիշ յանցանք ունեցած չէր վերջապէս եթէ ոչ իմ վրայ դնել իր բոլոր վստահութիւնը. վասնզի, ստոյգ գիտեմ, անկէ ի վեր ինէ զատ մէկը սիրած չէ, և մինակ ես երջանկութիւն ունեցայ… մինակ ես ունիմ այս հանգարտ և անբիծ հոգին խռովելու խղճահարութիւնը…

Կարճ խօսքով, ըրի ինչ որ պատիւը կը պատուիրէր ինծի, և այս սոսկալի յայտնութենէն ութ օր ետքը, կը հնչեցնէի մօրս դըղեակին զանգակը։

Բ.

Կը խնայեմ ձեզ «Ի՛նչ։ Դո՛ւն։ Ի՞նչ։ Ի՞նչպէս»ները, որք ընդունեցին զիս երբ հասայ։ Մայրս մտածեց խեղդել զիս իր բազուկներուն մէջ։ Կը վախնար թէ աղէտալի արկած մը պատահած է ինծ. շատ դժուարութիւն քաշեցի զայն ապահովելու համար։

Ջանացի հանդարտեցնել զայն, և ամենէն անտարբեր կերպարանքս առի՝ սա յոյժ բնական խօսքերն ըսելու համար.

—Կը հաճի՞ք սենեակս փոխադրել տալ իմ պայուսակս։

—Անշուշտ, սիրելի զաւակս… հանգիստ պէտք ունենալու ես, —Բիէռ, շարունակեց, կանչելով, որդւոյս բեռները կապոյտ սենեակը տարէք։

—Ի՜նչ, գոչեցի, կանա՞նչ սենեակն ըսել կուզէք։

—Ոչ, զաւակս, կապոյտ սենեակը։

—Ներեցէք, մայրիկ. բայց իմ սենեակս… կանանչ սենեակն է իմ սենեակս։

—Էր… մի՛ շփոթիր։

—Ուրեմն ո՞վ կը գրաւէ իմ սենեակս։

—Տես, ըսաւ մայրս ժպտելով և մատովը ցուցնելով դուռը որ կը բացուէր, ասանկ գրաւողը։

—Կաբրիէ՜լ։

Վասնզի Կաբրիէլն էր, իմ զարմուհիս, զարմուհիներուն էն պզտիկն, էն սիրունը… խարտիշագեղ առատ մազեր, կապոյտ աչուըներ, մանկունակ ժպիտ մը և մարգըրիտի նման ակռաներ։

Եւ ինքը, ինքն էր որ կը գրաւէր կանանչ սենեակը և որ խառնած ըլլալու էր կահե՞րը…

Օ՛հ, օ՛հ, օ՛հ, դժբախտութի՜ւն, եռե՛ց դժբախտութիւն։

Զարմուհիս, զուարթ, միամիտ և վըստահալից, ինծ կարկառեց ձեռքը, քիչ մը երկչոտ. —[illegible] էր նա այսպէս. — եւ ըսաւ ինծ.

—Բարեւ, զարմիկս։

Կը խոստովանիմ թէ ոչ դէմքս ամենակատարեալ [illegible] յայտնելու էր… Անոր երեսը կը նայէի, կուզէի գուշակել իր այնքան վճիտ աչուըներուն մէջ թէ կեղծիքը պահուըտած չէ՞ր պարկեշտ աղջկան այս բիբին մէկ անկիւնը… Գտա՞ծ էր, կարդացա՞ծ էր։

Վասն զի, խօսքը մէջերնիս, անիկա, Տիկին… այս ինչը, չա՞տ, բայց շատ սիրած էր, և խօսուն երաժշտութեան վերածելու յանցանքն ունեցած էր իր տըպաւորութիւններուն աստիճանական երանգները։ Իրա՛ւ. «Օ՛հ» եր և «Ա՛հ» եր կային նամակներուն մէջ, հիացական նըշաններ, եւ շատ քիչ ընդհատական կէտեր(…)։ Եւ եթէ Կաբրիէլ կարդացա՞ծ ըլլար… Այս մտածումէն իսկ կարմրեցայ։

Բայց ի՛նչ հանդարտութիւն, ի՛նչ պայծառութիւն. «Բարեւ, զարմի՛կս», ոչ աւելի, ոչ պակաս։ Եւ, ձեռքիս մէջ, փոքրիկ ձեռք մը թարմ, անուշ, կոյսի ձեռք մը։

Այո, բայց ո՞ր անդունդ աւելի խորունկ է քան կնոջ սիրտը, ըսած է սաղմոսերգուն… Եթէ կարդացա՞ծ էր… Ապահով ըլլալու միակ միջոցն էր իր սենեակը մըտնել։

Իր սենեա՞կը. ի՛նչ քաղցր ներդաշնակութիւն այս բառին մէջ, երբ խնդիրը սըրբատուփի մը վրայ է ուր կը բնակէ այն մանկամարդ աղջիկը որ ասանկ բարձր ճանչցուած է եւ որ եղած է ամենէ… Բայց գործը ասոր վրայ չէ… Այդ սրբատունը մտնելու է… Երբեք չպիտի համարձակիմ…

—Զարմիկս, եկէք տեսէք ի՛նչպէս սիրուն յարդարեցի ձեր սենեա՛կը։

Գ.

Ուրախութի՜ւն, երջանկութի՜ւն, ցնծո՜ւթիւն, միամտութիւնն օգնութեան կը հասնի անբաղդութեան։ Ազատեցայ։ Զարմուհիս վեր կ'ելնէ թեթեւաքայլ և շնորհաւոր։ Ի՛նչ ազուորիկ հասակ. Իսկ ես, յանցաւորը, անոր կը հետեւիմ… Գրեթէ կը վախնամ։ Բայց արդեօք դիպուածով բոլորովին տարբեր յուզում մը չպիտի՞ ունենայի։ Ոչ, ոչ, նամակներս կուզեմ, նամակներս պէտք են ինծի։

Սիրուն է իմ նախկին սենեակս, համակ կարմիրով և ճերմակով զգեստաւորուած… Եւ ալ սիկառ չի հոտիր։ Անկողին մը, բոյն մը [illegible] ծածկուած վարագոյներու տակ որք կարծես սաւառնող թեւեր են։

Հին գզրո՞ցն, ահա՛։

—Սիրելի զարմուհի, խնդրեմ գաւաթ մը ջուր կը բերէք ինծ, ծարաւէս կը մեռնիմ։

Կաբրիէլ կը ժպտի, և ըմպանակին կը նայի. նշմարած էր—ես, հին պատանայ, —թէ պարապ էր ան։

—Երթամ ջուր բերեմ։

Դուրս կ'ելնէ զարմուհիս։

Գզրոցին կը վազեմ. առաջին պահարանը… հազիւ կը համարձակիմ բանալ… բա՛ց, կը բանամ… սոսկո՜ւմ. ոչի՜նչ, ոչի՜նչ, ոչի՜նչ…

Զարմուհիս սենեակ կը դառնայ… Ջուր կուտայ ինծ մէջը քիչ մը մրգօղի խառնած … ալպոմ մը կը ցուցնէ… կը խօսակցի հետս։

Միշտ նոյն ընկերուհին է։

Ո՞ւր են նամակներս։ Առա՞ծ էր զանոնք, պահա՞ծ էր, այրա՞ծ։ Գլուխս կ'եռա՛յ։

Պատրուակ մը կը գտնեմ և ես ալ դուրս կ'ելնեմ։

Վերնադատանին վրայ, հօրաքրոջս կը հանդիպիմ։ Ա՛հ, ազնիւ և բարի հօրաքոյր։ Ինչո՞ւ զիս համբուրելէ ետք աչքի այն պզտիկ քթթումը և սա զուարթօրէն սպառնալից մատը։

—Եկու, չարաճճի տղայ, կըսէ ինծ։

Իր սենեակը կը քաշէ կը տանի զիս, գզրո՜ց մը կը բանայ, նամակներու տըրցա՛կ մը դուրս կը հանէ։

—Ի՞նչ է ասիկա, սատանա՛կ։

Երկի՛ր և երկի՜նք. իմ նամակնե՞րս են։

—Բարեբախտաբար, կը շարունակէ նա, ըսի ինքնիրենս, ես որ մարդերու և իրերու փորձառութիւնն ունիմ, թէ մանկամարդ աղջիկ մը անզգուշաբար առաջ սենեկի մը մէջ ուր ժամանակով քու տարիքդ ունեցող մանչ մը բնակած է, աղէկ կըլլայ աչքէ անցունել զայն խնամքով, և աղէկ որ

Ծոցը կը նետուիմ, կը համբուրեմ… և ամեն բան կը խոստովանիմ… Այնքան գոհ եմ։ Ազատեցա՛յ, ազատեցա՛յ։ Օ՛հ, իմ սիրելի փոքրիկ զարմուհիս… ո՜րչափ երջանիկ եմ… Ա՜յնքան վախցայ…

Դ.

Ութ օր անցաւ։

Առտու մը, անկողնէս ելնելով կանանչ սենեկին մէջ, կը նշմարեմ պզտիկ թուղթ մը որ կարծես դրանս տակ սպրդուած է։ Ա՞յս ինչ է։ Նամա՛կ մը, ո՛հ, կը բանամ։

«Սիրելի զարմիկ — կըսէր փոքր տոմսը — ինչո՞ւ այդ բաները չես ըսեր մայրիկին։»

Հանելո՞ւկ. «այդ բաները»։ Ի՞նչ. ես բա՛ն մը ըսած չեմ… ի՞նչ կրկնելու եմ «մայրիկին». «Սիրելի՛ զարմիկ» ուրեմն զարմուհիս է ինծ գրողը…

Նախաճաշի ժամուն կը սպասեմ։

Սանդուխին վրայ Կաբրիէլին կը հանդիպիմ, խօսք պիտի ուզեմ իրեն, — բայց, շիկնելով և գլուխս խոնարհելով, թուղթ մը կը սահեցունէ ձեռքս մրմնջելով.

—Ետ առէք ձեր նամակն ու խօսեցէք մայրիկին։

Իմ նամա՞կս։

Պարտէզ կը վազեմ։

Հա՛ եւ չա՛նթ, այո, նամակն ինծ է, իմ գիրս, իմ ոճս է։

«Պաշտելի էք դուք, ուրեմն կը պաշտեմ ձեզի։ Կուզէ՞ք լսել ինծի, կուզէք թոյլ տալ ինծ որ ձեզ նուիրեմ կեա՞նքս։ Բառ մը, և ոտքերնուդ կ'իյնամ։»

«ԺՈՐԺ»

Նախկին սիրուհիիս ուղղած առաջին նամակս էր։

Եւ գիտէ՞ք ինչ կը նշանակէր այս։

Ցրիւ նամակը սպրդած էր հին գզրոցին մէկ ճեղքին մէջ. արդ, Կաբրիէլ գտած էր զայն եւ կը կարծէր թէ իրեն էր ուղղած…

Ասկից առաջ եկած էր պատասխանը. «խօսեցէք մայրիկին։»

Եւ կուզէ՞ք հիմակ իմանալ այս արկածին վախճանն։

Խօսեցայ «Մայրիկին», ամուսնացայ Կաբրիէլին հետ, և կը պաշտեմ զայն, և ամուսիններու էն երջանիկն եմ։

Երկու ամիսէն կ'ունենք։

… Շնորհակալութիւն, հի՛ն գզրոց։

ԺԻՒԼ ԼԵՄԻՒՆԱ

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Բոլորովին ճաղատ պարոն մը ճաշարանին մէջ։

Հե—րը.— Է՛, սպասաւո՛ր, ապուրիս մէջէն մազ մը ելաւ։

Սպասաւորը.— Թերեւս ձեր գլխէն ինկած ըլլայ, Տէ՛ր։

Հե—րը.— (ինքնիրեն) — Հաճելի շողոքո՛րթ, երա՛ն որ պարգեւ մը կարժես.

* *

Կին մը, ծերունի, փորձառու և իր իմաստութեամբ հռչակաւոր փաստաբանի մը գնաց խորհուրդ հարցնելու թէ ի՞նչ ընելու էր, որովհետեւ ամուսինը իրմէ բաժնուիլ կուզէր, վասնզի ինքը անոր չափազանց [illegible] էր։

—Հը՛մ, հը՛մ, հը՛մ, ըսաւ փաստաբանը, դժուարին հարցում մը։ Ու սկսաւ իր գրքերուն մէջ փնտռել։

Սեղանին վրայ դրուած գիրքերուն թերթերը հետզհետէ կը դառնային — բայց ի զո՜ւր։ Այն ժամանակ հրամայեց ծառային վար իջեցնել շատ մը այնպիսի գրքեր, զորս փաստաբանական արուեստին մէջ գտնել ուրիշ կը գործածէ — նմանապէս ապարդիւն։

Հուսկ ուրեմն, մտածեց քիչ մը, ապա գլխով նշան ըրաւ ծառային ամենէն վերի աչքի ամենէն վրայի խոշոր ու ծանր գիրքը տալու։ Հազիւ թէ ծառան գիրքը փաստաբանին առջեւ սեղանին վրայ դրած էր և սա ալ բացած, յանկարծ սորա փոթ փոթ դիմագծերը պայծառացան։ Կինն, որ անձկանօք կը սպասէր, սկսաւ աւելի դիւրաւ շունչ առնուլ։ Փաստաբանն արդարեւ գտած էր, ինչ որ այնչափ խանդով կը փնտռէր — իր ակնոցը։

Յայնժամ ակնոցը քթին դրաւ և երկար ու խուզարկու ակնարկ մը նետեց կնկանը վրայ և խոր լըջութեամբ մ'ըսաւ. «Արդարեւ ամուսինդ իրաւունք ունի»։

* *

Երկու նշանածներ։

—Արթի՛ւր, գիտե՞ս, առաջուան չափ չես սիրեր։

—Ո՞րկէ հետեւցուցիր ասիկա։

—Երբ առաջներն իրարու կը բաժնուէինք, կ'ըսէիր ինծի. «Արդ ի պատիժ՝ քեզմէ հարիւր համբոյր պիտի առնեմ։» Իսկ հիմա միշտ կ'ըսես. «Այսօր ի պատիժ եւ ոչ իսկ համբոյր մը պիտի առնեմ քեզմէ։»

Հ. Ց. Ծ.

Վարձու մեծ տուն մը կահուած, 14 սենեակներով, Եէնի-քէօյի բարձունքին վրայ, ուսկից փառաւոր տեսարան մը կը պարզուի Վոսփորի վրայ։ Դիմել լրագրոյս գրասենեակը։
576 2—5

ՀՐԱՏ. Զ. ԹՈՐՈՍԵԱՆ ԳՐԱՏԱՆ

Վ. Յ. ՅԱԿՈԲԵԱՆ

ԲԱՌԱՐԱՆ ԱՆԳԼԻԵՐԷՆԷ Ի ՀԱՅ

ՀԵՏԵՒՈՂՈՒԹԵԱՄԲ

Ուղղագրի եւ Ուղղախօսի [illegible] բառագրոց

Առաւել քան 45,000 բառ, [illegible]

Անգլիերէնէ ի Հայ-աշխարհիկ բառարանի մը անմիջական պէտքը ի վաղուց զգալի եղած էր։ Սոյն պէտքը լիովին գոհացուցած է Անատոլիա Գոլէճի ուսուցիչներէն Վ. Յ. Յակոբեան էֆէնտի, պատրաստելով իր երկու պաշտօնակցաց Յ. Մանիսաճեան եւ Յ. Դայեան էֆէնտեաց աջակցութեամբ սոյն օգտակար երկը։

Բաց ի սովորական բառերէ եւ ոճերէ կը պարունակէ նաեւ [illegible] վեր ի վերոյ բոլոր բառերն եւ ոճերն, պարզուած իրենց նիշ համապատասխաններով, [illegible] Բագրատունի, Աւգերեանի, Նորայրի, Կոլուէեանի եւ Նուպարեանի Գաղ. Հայ. Անգլ. եւ Գերմաներէն բառագիրք եւ գիտական-արուեստական նորագոյն գործոց մանրակրկիտ քաղուածութեամբ. ի հարկին նաեւ տանկերէնով։

Գործոյս վերջը աւելցուած է 1. Անգլիերէնի մէջ գործածական դարձած լատիներէն, գաղիերէն, իտալերէն եւայլն ոճեր։ 2. Յատուկ անուանց ցանկ մը՝ հնչումներով։ 3. Բառագիտական յաւելուած պարզուած են մանրիկներու դերն եւ զօրութիւնն։ 4. Անգ. հնչման եւ [illegible] վրայ մասնաւոր կանոններ։ 5. Համառօտագրութիւնք որ յոյժ գործածելի են Անգլիերէնի [illegible] Հնչումները՝ [illegible]

Բաժանորդագրիլ [illegible] բաժանորդաց համար. [illegible] 27 բօլդայի ծախիւ։

Կեդրոնատեղին է [illegible] Զ. Թորոսեան էֆէնտիի, [illegible] Նումախեան դիմաց. եւ ի [illegible] Անատոլիա Գոլէճ, ի Մարզուան։

35 թերթ պիտի լինի ամբողջ գործը։

Ա. թերթին նմոյշը [illegible]

Հրատարակուեցաւ 21րդ թերթը

ՏՊԱՐԱՆ, ՎԻՄԱԳՐԱՏՈՒՆ, ԿԱԶՄԱՏՈՒՆ
ԳՐԱՏՈՒՆ

Գ. Պաղտատլեան

ՊՆԱԿՔ ԽՈՇՈՐԱԳՈՐ

Լաւագոյն թղթի վրայ վայելուչ տիպով, հակայ մեծութեամբ ներկայացուած են մանուկ աչքերու Հայերէն գրերն ու թուանշանք։ Առաջին տախտակը յատկացուած է բոլորագրի և թուանշանաց, իսկ Երկրորդը գլխագրի, կէտերու եւ նշանաց։

Մասնաւոր խնամով պատրաստուած այս Այբբէնը կոչուած է մեծ եւ զգալի պակաս մը լնուլ ոչ միայն Մանկապարտէզներու եւ Ծաղկոցներու՝ այլ ամէն տան մէջ, ուր մանուկն սկսած է արդէն խօսիլ։

Այս պնակը կարելի է գործածել Բերականէ յառաջ զանազան եղանակաւ. տախտակի կամ պատի կամ խորանարդ փայտերու վրայ փակցունելով, կարելի է նաեւ մկրատելով իրարու յօդել եւ կազմել վանկեր բառեր եւլն.

ԳԻՆՆ Է 1 ԴԱՀԵԿԱՆ

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ ԿԱՄ ՔԵՐԱԿԱՆ
ՀԻՆ ՈՃՈՎ

Թուղթ, տպագրութիւն եւ կազմ լաւագոյն են. Գինն անհաւատալի աժան

100 հատը 5 ղրուշ

Կեդրոնատեղին է Պաղտատլեան գրատուն, Սուլթան համամ 14.

[illegible]

Կ. Պոլիս, 15 [illegible] 1892

Պարոնայք [illegible] եւ [illegible],

Յարգէ հետէ սկսած եմ գործածել ձեր [illegible] Օշարակը, մինչեւ յաւ արդիւնքներ ունեցայ մանկանց [illegible] եւ [illegible] հիւանդութեանց քանի մը դէպքերու մէջ.

Իմ կարծիքս է թէ այս հաճոյ եւ յաջող պատրաստութիւնը մինչեւ Նախամեծար համարուելու է [illegible] կը յանձնարարեմ զայն.

ՏՐ. Ա. ԱՆՏՈՆԵԱՆ

[illegible]

ԻԼԱՆ

ԽԱԶԻՆԷԻ ԽԱՍՍԱԻ ՇԱՀԱՆԷ

Խազինէի Խասսաի շահանէ իչուն ալընաճագ Հօլանտա վէ Թրիեսթէ չէքէրլէր իլէ մաաանրօյ վէ էլմիսէլէք չէքէր րէնկ քէթէն պէզլէրին միւնագասաասը պաշլանըլաճաղընտան թալիպ օլանլարըն բազար վէ չարշանպըհ կիւնլէրի Խազինէի ճէլիլէյի մէզքիւրէյէ պուլունմալարը իլան օլունուր։
28 Նիսան 309 1—3

ԻԼԱՆ

Զըրաաթ Պանգասը իչուն թապ իթթիրիլէճէք օլան 700 աատէտ մուհասէպէ դէֆթէրի [illegible] թալիպ օլանլարըն [illegible] 10տա [illegible] 10նա գատար 100տէ 5 թէմինաթ [illegible] Զըրաաթ Պանգասը խարէտ [illegible] իլան օլունուր։
28 Նիսան 309 577 2—2

ԻԼԱՆ ՊԱՊԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Ին[illegible] աքէրիէ իչուն [illegible] 100տէ 5 թէմինաթ [illegible] իլան օլունուր։ Նօ. 49 2—3

PHŒNIX FIRE OFFICE

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՈՅԹ Անգլ. ոսկի 1.000,000

ՖԻՆԻՔՍ

Հիմնուած ի Լոնտոն թուին 17[illegible]

ՖԻՆԻՔՍ, հիմնուած աւելի քան մի դար յառաջ, սոսկ հրդեհի ապահովագրութեան ընկերութիւն մ'է որոյ բաժնետէրք Անգղիոյ ամենահարուստ և հանրածանօթ դրամատէրքն են՝ անհունական անսահման պատասխանատուութեամբ։

ՖԻՆԻՔՍ ընկերութեան աշխարհահռչակ աւատաձեռնութեան մի գլխաւոր ապացոյցն է 18.000.000 Անգղ. ոսկւոյ գումարն զոր ցարդ վճարած է հրդեհի վնասուց համար։ 34

ՖԻՆԻՔՍ ընկերութիւնն կ'ապահովագրէ ամէն տեսակ [illegible] կալուածք, կարասիք և ապրանք յոյժ նպաստաւոր պայմանօք և մրցողութեամբ, ապահովելով, որք ունին փոխօր իշխանութիւն կարգադրելու անմիջապէս մեր ապահովագրելոց կրած վնասներն։

Հ. ՍԻՒԱՆ և ԸՆԿ. ընդհ. գործակալք Կ. Պոլսոյ, Պուլկարիոյ և Սեւ ծովու նաւահանգստից Ղալաթիա, Կամուրջի դէմ, Քօմիսիոն խանի անկիւնը։

HAMBURG MUNICH UNITED

ՀԱՄՊՈՒՐԿ եւ ՄԻՒՆԻԽ

ՄԻԱՑԵԱԼ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

Դրամագլուխ	Ֆրանք	8.000.000
Պահեստի դրամ	,	6.889.695
Տարեկան հասոյթ	,	16.890.344

Ընկերութիւնքս ՓՈԽԱԴԱՐՁ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ կ'ապահովագրեն մթերանոցներ և հաստատութիւններ և տուն մէջ գտնուած կահ-կարասիներ և ապրանքներ խիստ չափաւոր սակագնօք.

Ընդհ. ներկայացուցիչ Կ. Պոլսոյ

ԳԱՍՊԱՐԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ, Պոլիս, Պահչէ—Գաբու, Ընանիատիս խան. 12, 13, 14

369

ՖՐԱՆՔՖՕՐԹՈՒԱՑ

ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Դրամագլուխ Ֆրանք 6.250.000 Պահեստի դրամ Ֆրանք 2.585.853

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շոգենաւուց և առագաստանաւուց վրայ բեռցուած վաճառքներ, ինչպէս նաև թղթատարական և փոխադրական ընկերութեանց յանձնուած թանկագին նիւթեր և դրամ պարունակող ծրարներ խիստ նպաստաւոր պայմանօք և սակագնօք։ Այն նիւթերու վրայ մեծաքանակ գումարներ կարենալ ապահովագրելու համար Ընկ. [illegible] միացած է եւրոպեան 13 լուրջ ապահովագրական հաստատութեանց հետ որոց դրամագլուխ ու պահեստի դրամն է Աւելի քան 100.000.000 Ֆրանք.

Ընդհ. Ներկայացուցիչ [illegible] Թուրքիոյ

ԻԼԱՆ ՊԱԶԸՐ ՍԷՐԱՍՔԷՐԻ

10.000 իլա 20.000 ատէտ քիլիմ, 15 պին իլա 30.000 գըրէի ճէտիտ եաղը քէօսէլէ, 2.550 իլա 4050 ատէտ սարը Թօզա, 1000 իլա 2000 ատէտ Փիչէնքլիք Թագըմը, 850 իլա 1.700 ատէտ սէյֆպէնտ իչուն չէնկէլ վէ մագարա, 2000 իլա 4000 ատէտ նէֆէրաթ սարը Թօզա, 100.000 իլա 200.000 ատէտ մուխթէլիֆ նումէրօլը Թօզա, 4050 իլա 8000 Թօբանթարլըք Շամ ալաճասը, 5.500 իլա 11.000 մէթրօ չիզմէ չէրիտի, 600 իլա 1.200 գըրէի ճէտիտէ սաճա միսմարը, 350 իլա 700 գըրէի ճէտիտէ նալչա չիվիսի, 3.100 իլա 6.200 տուզինա 200 եարտալը սիեահ վէ պէեազ մագարա իպլիկի, 150 իլա 330 գըրէի ճէտիտէ սաճա իպլիկի, 150 իլա 330 գըրէի ճէտիտէ օլթան իպլիկի, 45 իլա 90 մէթրօ բօթին լասթիկի, 850 իլա 1.700 մէթրօ սիեահ աստարլըգ, 3.500 իլա 7000 մէթրօ սիեահ եուն չէրիտ, 8.400 իլա 16.800 մէթրօ պէեազ մէշին, 4.650 իլա 9.300 մէթրօ սիեահ Թէլաթին, 21.750 իլա 43 պին 500 մէթրօ սիեահ վէ պէեազ վաքէթա, 35.700 իլա 70.800 մէթրօ հատտէքէ-քեարի եանի Թօզմագը քէօսէլէ, 2.750 5.500 գըրէի ճէտիտէ պաշըզ եօգճէ միսմարը։

Իւչիւնճի օրտուի հիւմայունուն իչուն 309 սէնէսինէ մահսուպէն միւպայեա օլունմագ իւզրէ մահալլինճէ էֆզալի միւնագասաեա գօնուլան էշեաեան պալատէ մուհարրէր 22 գալէմ էշեաեը իթանեա Թալիփ օլանլարըն Թարիխը իլանտէն իթիպարէն 20 կիւն խիթամընտա գաաար մագամը Սէրասքէրի լէվազըմաթը ումումիյէ տայիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր։

Նօ. 47 3—3

Սէլանիք Փըրգասը իլէ մէվագըրինտէ պուլունան ասաքիրը շահանէ հայվանաթը իչուն 309 սէնէսինտէ լիւզումի օլաճագ էշեաեի մուլթաս ապիլէ մէվգըլի միւնագասաեա գօնուլմըշ օլտուղունտան իթասընտա Թալիպ օլանլար իլէ չէրայիթը մուգավելէնամէսինի անլամագ իսթէէնլէրին Թարիխը իլանտէն իթիպարէն նիհայէթ 1 հաֆթաեա գատար մագամը Սէրասքէրի լէվազըմաթը ումումիյէ տայիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր։ Նօ. 48 3—3

ՍԷՅՏԷԼ ՆԱՈՒՄԱՆ

ՏՐԷԶՏԷ

(Սաքսոնիա)



1400 գործաւորք տարին 80000 մեքենայ կը շինեն։ Ընտանեաց համար ձեռքի մեքենայներ, Դերձակներու և կօշկակարներու համար ոտքով շարժող մեքենայներ։ Կարի մեքենայներու ամենէն լաւ տեսակը

ՏԱՆՕԹ.—Սաքսոնիայի և Նաումանի բուն իր մեքենայներուն վրայ վերոյիշեալ մետալները նկարուած են։

Թուրքիոյ ընդհանուր գործակալ Մ. Փ. ՄԻՐՃԱՆՈՎ, Պոլիս, Պահչէ Գաբու, Մէյտանճըք փողոց Թիւ 54 և 56 489 18—26

ՄՈՍ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լիվըրփուլէ և Միջերկրականի միջև բանող շոգենաւք

Անուանք	Թոնաջ	Անուանք	Թոնաջ
Քառնաք	4200	Սֆինքս	3000
Ֆէրօս	4000	Օսայրիս	3000
[illegible]	4000	Նէֆթիս	3000
Սէսօստրիս	3250	Թէպս	3000
Թիպս	3250	Լոթիւս	800
[illegible]	3250	Օլիմբոս	800
Մարէօթիս	3250	[illegible]	700

«Սֆինքս» շոգենաւը, նաւապետ Բեալի, մայիս 3ին Լիվըրփուլէն աստ կը սպասուի ընդհանուր վաճառքով։

Դիմել առ Ժ. Վ. ՎԻԹՕԼ և Ընկ.

Ուխթոլ խան

ՃԷՕՐՃ ՄՈՍ և ԸՆԿ.

292 31, [illegible] Լիվըրփուլ

Ընդդէմ [illegible]

Եւ այն հիւանդութեանց որոց պատճառն է.

ԼԵԱՐԴԱՅԻՆ ԽԻԹԵՐ

ԼԵԱՐԴԻ ԿԱԼՈՒԱԾ

ԿԱԹՈՒԱԾԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

ՈՒՂԵՂԱՅԻՆ ԱՐԵՆԱՀԱՒԱՔՈՒՄ

ԱՂԵԱՑ ԹՈՒԼՈՒԹԻՒՆ

ԱՐԻՒՆԵՐԹՈՒԹԻՒՆ

[illegible]

[illegible]

Առոյգ յաջողութեան կիրառութեամբ

ՎԻՇԻԻ ԼՈՒԾԻՉ ՓՈՇԻԻՆ

ի Ֆաբր. ԼԷՕՆՍ ՍՈՒԼԻՆԻԷ

Բուսային և անուշահոտ փոշեհատ բաղկացեալ զոր ծամելը բոլորովին անվնաս է։ Առանց անպատեհութեան կրնայ գործածուիլ տղայոց, ծերունիներու, տկար մարդերու և յղի կանանց կողմէ, — շատ ախորժահամ, դիւրին կ'առնուի. Գդալ մը ջուր կամ սուրճի գդալ մը այս փոշիէն հալեցնելով պատրաստուած լուծիչ մը, սպասուած արդիւնքը կ'առնուի առանց խիթի և փորհարութեան. Փարիզ, 6, Վիքթորիա Թատրոնի, կը գտնուի գլխաւոր դեղարաններու մէջ։

ԱՏՈՒԿ ԼՈՒԾԻՉ ԵՒ ԶՈՎԱՑՈՒՑԻՉ

ԽԻՍՏ ԱԽՈՐԺԱՀԱՄ

TAMAR INDIEN GRILLON

Ընդդէմ ՓՈՐՀԱՐՈՒԹԵԱՆ Արիւներթութեան, գլխացաւի, մաղձի, անախորժութեան, տամոքսի և աղեաց անհանգստութեան.

E. Grillon

տորագրութիւն տուփին վրայ դրուած

ՓԱՐԻԶ, ԿՐԻՅԼՕՆ, 33, Արշիվ փողոց

դեղարանաց մէջ, 33, rue de Archives 120

EMULSION SCOTT

(ՍԳՕԹԻ ՕՇԱՐԱԿ)

ՄՈՐՈՒԻ ՁԿԱՆ ԽՈՒՏ ԻՒՂ,

Իբօֆօսֆիթ կրով և սոտայով

Պատրաստուած ձեռամբ ՍԳՕԹԻ և ՊՕՈՒՆԻ ի Նեւ-Եորք.

Կաթին չափ ախորժահամ է

Մորուի ձկան հում իւղի բոլոր յատկութիւններէն զատ, Իբօֆօսֆիթներու յատկութիւններն ալ ունի

Կը բուժէ թոքախտը

Կը բուժէ անարիւնութիւնը

Կը բուժէ խոյլերը

Կը բուժէ հազը, ցրտառութիւնները

Կը բուժէ ընդհանուր տկարութիւնը

Կը բուժէ մանկանց ճօղամութիւնը

Բժիշկներէն ընդունուած է, ախորժ համ ու հոտ ունի, դիւրամարս է, և ամենէն փափուկ ստամոքսները կը տանին զայն։

Կը վաճառուի գլխաւոր դեղավաճառաց և դեղագործաց քով։

Ընդհ. պահեստը ի Պոլիս, ՀԱՄՄԷՐ ԵՒ ՀԱՅՐԷ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՔ

Լիվըրփուլ, Անվերս, Կ. Պոլսոյ և Սեւ ծովու միջև

ԹՈՄԱՍ ՈՒԻԼՍԸՆ ՈՐԴԻՔ և Ընկ.

Անուանք	Թօնաժ	Անուանք	Թօնաժ	Անուանք	Թօնաժ
Ալպանօ	2000	Ֆլամինիօ	1600	Բալերմօ	3200
Անճէլօ	3000	[illegible]	5500	[illegible]	1700
Արօլլօ	5500	[illegible]	2200	[illegible]	1500
Արիօ	3300	Կոզօ	1800	Բօլօ	1000
[illegible]	5000	[illegible]	2200	[illegible]	2800
[illegible]	3000	Հիլօ	2000	[illegible]	1400
[illegible]	2200	Հորաթիօ	3500	Ռինալտօ	3200
[illegible]	2000	[illegible]	7000	Ռոլլօ	3000
[illegible]	3800	[illegible]	1200	Ռօմէօ	3500
[illegible]	2600	[illegible]	5000	Ռոզարիօ	3500
[illegible]	2500	[illegible]	2300	Սալերնօ	4000
[illegible]	2100	[illegible]	2000	[illegible]	6200
[illegible]	2000	[illegible]	4200	Սաբինօ	2000
[illegible]	2700	[illegible]	2200	Սիլվիօ	2000
[illegible]	3000	Լէօ	2000	Սօրէնթօ	4300
[illegible]	3500	Լէոնարտօ	4500	Թ. Ուիլսըն	3000
[illegible]	3400	[illegible]	3000	[illegible]	1200
[illegible]	2500	[illegible]	1500	Թոլէտօ	2800
[illegible]	2500	[illegible]	4300	[illegible]	900
[illegible]	4800	[illegible]	6500	[illegible]	5000
Էրաթօ	3100	[illegible]	2000	[illegible]	5000
[illegible]	2600	Մուրիլլօ	3100	[illegible]	3600
[illegible]	3000	Նէրօ	2000	[illegible]	1000
[illegible]	3200	Օրլանտօ	3000	[illegible]	200
[illegible]	2600	Օթէլլօ	5000	[illegible]	300
[illegible]	800	[illegible]	4500	[illegible]	140
[illegible]	700	[illegible]	2000	[illegible]	120
[illegible]					8000
[illegible]					8000
[illegible]					8100

Ուղեւորներու համար ամեն դիւրութիւն կ'ընծայուի

Դիմել առ Ֆ. ՀԱԼՏ ԵՒ ՈՐԴԻ

Գործակալք

Թիւ 17-18, Քիւչիւք Մէհէք խան, Ղալաթիա

293

ՔԻՒՆԱՐՏ (CUNARD)

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՇՈԳԵՆԱՒՈՒՑ

Որոյ ամիսը երկու անգամ կը բանին Լիվըրփուլ և Սեւ-ծովու միջև

Անուանք	Թոնաջ	Անուանք	Թոնաջ
Ումպրիա	7718	Գադալոնիա	4845
Էդրուրիա	7718	Պոթնիա	4531
Սերվիա	7391	Սամարիա	3574
Աուրանիա	7268	Մարաթոն	2403
Բաւոնիա	5587	Աթլաս	2393
Ծեֆալոնիա	5517	Սարագոսա	2166
Գալլիա	4809	Թարիֆա	2246
Սիթիա	4557	Բալմիրա	2144
Ալեփփօ	2143	[illegible]	899
Քէտար	1876	Մորոքքօ	1855
Շերպուրկ	1614		

Շերպուրկ շոգենաւը, նաւապետ Քինկ, Լիվըրփուլէն աստ կը հասնի դէպի ամսոյս 23ին։

Դիմել առ ԹՈՄԱՍ Ջ. ՃՈԼԻ գործակալ

Thomas C. Joly

Ալէքսանտրաս խան Թիւ 401

17 Ղալաթիա

ՌՈՒՍԵԱԼ ԷՔՍՉԷՆՃ

ԱՍԻՒՐԱՆՍ ՔՕՐՓՕՐԷՇԸՆ

ԱՄԵՆԷ ՀԻՆ ԵՒ ԱՄԵՆԷ ՄԵԾ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԼՈՆՏՈՆ 1720ԻՆ

Դրամագլուխ աւելի քան Անգլ. ոսկի 4.000.000

Ցարդ հրդեհի արկածից համար տուած է , 35.000.000

Ընկերութիւնը կ'ապահովագրէ քարաշէն և փայտաշէն ամեն տեսակ կալուածներ, կահ կարասիք և ապրանք։

Վճարումները ամենայն կանոնաւորութեամբ և մանաւանդ առանց որ և իցէ ՁԵՂՉԻ կը կատարուին։

Աւելի ընդարձակ տեղեկութիւն առնուլ փափաքողք կը հրաւիրուին դիմել առ Ընդհանուր գործակալս Ճ. Վ. ՈՒԻԹԱԼ ԵՒ ԸՆԿ.

Պահչէ Գաբու, Մէյտանճըք սօքաք, Ուիթալ խան.

140

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՑԿԱԿԱՆ ԵՒ ՄԱՐՈՔԵԱՆ

Ն. ՓԱՔԷ ԵՒ ԸՆԿ.

Մարսիլիոյ և Պաթումի միջև կանոնաւոր բանող

«Մինկրելի» շոգենաւը մայիս 16ին երեկոյեան ժամ 5ին (Ը. Ե.) պիտի մեկնի Կ. Պոլսոյ նաւահանգիստէն դէպ ի Պաթում, հանդիպելով Սամսոն, Կիրասոն և Տրապիզոն։

«Արմէնի» շոգենաւը, մայիս 23ին Մարսիլեա պիտի ուղեւորի։

Բարիզ-Լիոն-Մարսիլիոյ երկաթուղեաւ ուղեւորութիւնն ի միասին առնլով,

Ա. կարգ 245 Ֆրանք

Բ. , 175 ,

Ուղեւորաց և ապրանաց փոխադրութեան

Նաւաղնէի, ուղեւորութեան և այլ տեղեկութեանց համար

Դիմել առ գործակալս ԹԻՄՈԹԷ ԲԷՌԱՆ

477 [illegible]

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԺԱՄԱՑՈՅՑ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱՑ

ԳԻԾ Կ. ՊՈԼԻՍ—ԱԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ—ՊԵԼԼՈՎԱ

Արեւ. ձեպն. Թ. 2 Բշ. Եշ. Ա.	Կոխ. ձեպ. Թ. 4 Ամ. օր Ա Բ Գ	Կոխ. խառն Թ. 62 Ամ. օր Ա Բ Գ	Կոխ. խառն Թ. 132 Բշ. Եշ. Ա Բ Գ	Կոխ. խառն Թ. 124 բաց ի կիր. Ա Բ Գ	ԿԱՅԱՐԱՆՔ	Կոխ. խառն Թ. 123 բաց ի կիր. Ա Բ Գ	Կոխ. խառն Թ. 131 Դշ. Շբ. Ա Բ Գ	Կոխ. խառն Թ. 61 Ամ. օր Ա Բ Գ	Կոխ. ձեպ. Թ. 7 Ամ. օր Ա Բ Գ	Արեւ. ձեպն. Թ. [illegible] Դշ. Շբ. Ա.
ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.		ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.
7 20	8 15	6 30			Մկ. Կ. ՊՈԼԻՍ .... ժմ.			8 52	8 22	4 00
		6 41			Գում—գաբու			8 23		
		6 53			Եէտի—գուլէ			8 07		
		7 12			Մագրիգիւղ			7 44		
		7 26			Այաստեֆանոս			7 22		
		7 45			Քիւչիւք—Չեքմեճէ			7 07		
		8 29			Սպարթա—գուլէ			6 22		
	9 33	9 05			Հատըմքէօյ			5 56	6 59	
		9 48			Չաթալճա			4 53	6 17	1 50
9 58	10 51	10 25			Գապաքճէ			4 20		
		11 27			Սինէքլի			3 29		
	12 12	12 09			ժմ. Չերքեզքէօյ մեկնում			2 37	4 58	12 09
	12 14	12 40			մկ. ժամանում			2 12	4 55	12 04
12 04	12 36	1 41			Չորլու			1 26	3 56	
		2 33			Մուրատլը—Քէօրքէօյ			12 26		
		3 05			Սէյտլէր—Չիֆթլիք ...			11 53		
	2 25	3 44			Լիւլէ—Պուրկազ			11 16	2 26	
2 05	2 55	4 30			Պապա—Էսքի			10 39	2 00	9 33
		5 13			Պավլը—քէօյ			9 40		
	3 58	6 05			Ուզուն—Քէօփրիւ			8 56	12 50	
	4 16	6 47			Գուլէլի—Պուրկազ			7 46	12 51	8 09
		7 12			Ուրլի			7 14		
4 21	5 09	7 59			ժմ. ԱԴՐ. ՊՈԼԻՍ .... մկ.			6 25	11 37	7 14
4 28	5 19		3 15		մկ. ժմ.		1 25		11 22	7 09
			4 07		Գառըքէօյ		12 32			
5 25	6 12		4 57		ժմ. Մուսթաֆա Բաշա մկ.		11 39		10 27	6 12
5 31	6 32		5 17		մկ. ժմ.		11 19		10 02	6 07
6 14	7 13		6 35		ժմ. Հարմանլը մկ.		9 54		9 18	5 23
6 20	7 38		6 55		մկ. ժմ.		8 48		8 59	5 18
	8 01		7 38		ժմ. Թըրնովա-Սէյմէնլի մկ.		8 01		8 33	4 55
	8 11			10 50	մկ. ժմ.	12 50			8 23	4 48
	8 47			11 50	Գայաճըք—Հասքէօյ ...	12 06			7 52	
	9 34			1 07	Եէնի—Մահալլէ	10 50			7 05	
8 38	9 59			1 49	Պապազլը	9 58			6 39	3 06
	10 25			2 04	Գատըքէօյ—Սթանիմաք	9 04			6 14	
9 23	10 44			2 49	ժմ. Ֆիլիպէ մկ.	8 25			5 54	2 17
9 33	11 04			3 20	մկ. ժմ.	7 51			5 34	2 12
	11 58			4 41	Թաթար Բազարճըք մկ.	6 45			4 43	
	12 22			5 12	ժմ. Սարամպէյ մկ.	6 00			4 17	
	12 28				մկ. ժմ.				4 16	
11 10	12 44				ժմ. Պելովա մկ.				4 01	12 44
3 20	4 29				Սոֆիա				12 34	15
2 10	9 30				Նիշ				5 51	9 20
8 45	4 48				Պելկրատ				[illegible] 55	37
9 40	1 20				Պուտապէշթ				2 [illegible]	3
3 16	7 20				Վիեննա մկ.				8 30	

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՔ

1. Ստորագծեալ վայրկեանները կը ցուցնեն իրիկուան ժամը 6էն և առաւօտեան ժամը 5.59ի միջև եղած գիշերուան ժամանակը.

2.—Կ. Պոլսոյ արուարձանաց ժամանակացոյցը մասնաւոր ցուցակ մըն է եղած։

3.—Ձախակողմի սիւնակաց մէջ կառախմբոց մեկնման ժամանակը պէտք է կարդալ վերէն վար, և աջակողմի սիւնակաց մէջ վարէն վեր։

4.—Թիւ 321 «խառն կառախումբը» ի Թրնովա—Սեյմէնլի կը հաղորդակցի 7 Թիւ «պայմանադրական կառախմբին» հետ։

5.—Թիւ 322 «խառն կառախումբը» ի Թրնովա—Սեյմէնլի կը հաղորդակցի Թիւ 4 «պայմանադրական կառախմբին» և Թիւ 131 «խառն կառախմբին հետ։

6.—Թիւ 621 խառն կառախումբը Ւսկիւպի մէջ կը հաղորդակցի՝ Ջիպեֆչէ գացող Թիւ 522 և Սելանիկ գացող Թիւ 513 խառն կառախմբոց հետ։

7.—Մահճաբարձ վակոն մը աւելցուած է Թիւ 7 և 4 պայմանագրական կառախմբոց, արեւելեան ճեպընթացին չբանած օրերն, այսինքն.

Կ. Պոլսէն մեկնող Թիւ 4 կառախմբին) Կիրակի, երկուշաբթի, չորեքշաբթի ուրբաթ և շաբաթ օրերը

Պելովայէն մեկնող Թիւ 7 կառախմբին) Կիրակի, երկուշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը

Ուղեւորք կրնան զայն ի կիր առնել յաւելուածական սակ մը վճարելով.

Ա. կարգ	Բ. կարգ	
Ֆր. 10.—	Ֆր. 7.—	Կ. Պոլսէն Ադր. Պոլսոյ համար կամ փոխադարձաբար
,, 12.—	,, 9.—	Կ. Պոլսէ Ֆիլիպէ Պելովայի համար կամ փոխադարձաբար

8.—Արեւելեան Եւրոպայի ժամանակը [Ա. Ե. Ժ.] 4 վայրկեան առաջ է Կ. Պոլսոյ տեղական ժամուն վրայ։

9.—Միջին Եւրոպայի ժամանակը [Մ. Ե. Ժ.] 32 վայրկեան ետք է Սելանիկի ժամուն վրայ։

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

ԳԻԾ ՍԷԼԱՆԻԿ—ԻՒՍԳԻՒՊ—ՋԻՊԵՖՉԷ

Կառխմբ. խառն Թ. 512 ամէն օր	Կառխմբ. խառն Թիւ 522 ամէն օր	ԿԱՅԱՐԱՆՔ	Կառխմբ. խառն Թիւ 523 ամէն օր	Կառխմբ. խառն Թիւ [illegible] ամէն օր
ժ. վ.	ժ. վ.		ժ. վ.	ժ. վ.
5 10		Սելանիկ (Պիւֆէ) ... ժմ.		10 18
5 44		Թօբսին ... մկ.		9 44
6 21		Ամաթօվօ		9 04
6 43		Գարասուլի		8 41
6 53		Կիւմէնճէ		8 31
7 31		Կէվկէլի		7 59
8 05		Միրօվչէ		7 18
8 15		Ստրումիցա		7 06
8 47		Տէմիրգաբու (Պիւֆէ) ժմ.		6 32
8 57		մկ.		6 17
9 42		Քրիվօլագ		5 48
10 21		Վլէնից—Կրացքօ		5 00
11 08		Քէօբրիւլիւ ժմ.		4 10
11 18		մկ.		4 00
12 06		Զէլէնիկօ		3 17
12 42	1 06	ԻՒՍԳԻՒՊ (Պիւֆէ) ժամ. մեկ.	2 20	2 41
	1 47	Աճալար	1 44	
	2 42	Գումանովա	1 07	
	3 15	Թապանօֆչէ	12 29	
	3 43	Բրեշօվա	12 04	
	3 56	[illegible]	11 46	
	4 21	[illegible]	11 16	
	4 34	Ջիպեֆչէ	11 00	
	9 38	Նիշ	5 31	
	4 48	Պելկրատ	10 38	
	1 20	Պուտապէշթ	2 40	
	2	Վիեննա մկ.	8 50	

ԳԻԾ ԻՒՍԿԻՒՊ—ՄԻԹՐՕՎԻՑԱ

Կառխմբ. խառն Թիւ 622 ամէն օր	ԿԱՅԱՐԱՆՔ	Կառխմբ. խառն Թիւ 621 ամէն օր
ժ. վ.		ժ. վ.
7 15	Իւսգիւպ (Պիւֆէ) ժամ.	12 29
8 22	Էլէշան ... մեկ.	11 36
9 17	Քաչանիք	10 59
10 27	Վէռիզովից	10 12
11 20	Լիբլեան	9 11
12 12	Պրիշթինա	8 16
12 58	Վուչիթրն	7 22
1 15	Միթրովիցա մկ.	7 00

ԹՐՆՕՎԱ—ՍԷՄԷՆԼԻ—ԵԱՄՊՕԼՈՒ

Կոխ. խառն Թ. 321 Եշ. եշ. Ա Բ Գ	Կոխ. խառն Թ. 323 Կիր. Ա Բ Գ	ԿԱՅԱՐԱՆՔ	Կոխ. խառն Թ. 322 Դշ. Շբ. Ա Բ Գ	Կոխ. խառն Թ. 324 Բշ. Ա Բ Գ
9 15	1 40	մկ. Թրնվ.-Սէյմէնլի ժմ.	7 20	9 48
9 53	2 25	Գարաբունար	6 46	9 15
11 05	3 32	[illegible]	5 45	8 14
12 13	4 43	Եէնի—Զաղրա	4 42	7 09
1 14	5 41	[illegible]—Քըրմանլը	3 41	6 18
2 00	6 30	Եամպօլու ժմ.	2 40	5 19
6 58		ժմ. Պուրկազ մկ.	9 40	

ԱԴՐԻԱՆԱՊՈԼԻՍ—ՏԷՏԷ ԱՂԱՃ

Կոխ. խառն Թ. 221 Բշ. Դշ. և ուր. Ա Բ Գ	ԿԱՅԱՐԱՆՔ	Կոխ. խառն Թ. 222 Դշ. Եշ. և շբ. Ա Բ Գ
7 51	մկ. Ա. Պոլիս .... ժամ.	6 53
8 47	Ուրլի	5 58
9 33	Գուլէլի — Պուրկազ ...	5 30
10 10	Տիմէթօքա	4 38
11 22	Սուֆլի	3 3
12 20	Ֆէրէճիք	2 31
1 21	Ֆէրէ	1 29
2 22	ժմ. Տէտէ—Աղաճ .... մեկ.	12 20

Արտօնատէր Ս. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ